

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ


T-350

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԹԵՈՐԻԱՅԻ

ԴԱՍԱԳԻՐՔ

11396
38



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ --- 1930

78
17-45

74
m-45

992

2013

ԴԱՍԱԳԻՐԲ

0
 8
 8

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100 101 102 103 104 105 106 107 108 109 110 111 112 113 114 115 116 117 118 119 120 121 122 123 124 125 126 127 128 129 130 131 132 133 134 135 136 137 138 139 140 141 142 143 144 145 146 147 148 149 150 151 152 153 154 155 156 157 158 159 160 161 162 163 164 165 166 167 168 169 170 171 172 173 174 175 176 177 178 179 180 181 182 183 184 185 186 187 188 189 190 191 192 193 194 195 196 197 198 199 200 201 202 203 204 205 206 207 208 209 210 211 212 213 214 215 216 217 218 219 220 221 222 223 224 225 226 227 228 229 230 231 232 233 234 235 236 237 238 239 240 241 242 243 244 245 246 247 248 249 250 251 252 253 254 255 256 257 258 259 260 261 262 263 264 265 266 267 268 269 270 271 272 273 274 275 276 277 278 279 280 281 282 283 284 285 286 287 288 289 290 291 292 293 294 295 296 297 298 299 300 301 302 303 304 305 306 307 308 309 310 311 312 313 314 315 316 317 318 319 320 321 322 323 324 325 326 327 328 329 330 331 332 333 334 335 336 337 338 339 340 341 342 343 344 345 346 347 348 349 350 351 352 353 354 355 356 357 358 359 360 361 362 363 364 365 366 367 368 369 370 371 372 373 374 375 376 377 378 379 380 381 382 383 384 385 386 387 388 389 390 391 392 393 394 395 396 397 398 399 400 401 402 403 404 405 406 407 408 409 410 411 412 413 414 415 416 417 418 419 420 421 422 423 424 425 426 427 428 429 430 431 432 433 434 435 436 437 438 439 440 441 442 443 444 445 446 447 448 449 450 451 452 453 454 455 456 457 458 459 460 461 462 463 464 465 466 467 468 469 470 471 472 473 474 475 476 477 478 479 480 481 482 483 484 485 486 487 488 489 490 491 492 493 494 495 496 497 498 499 500 501 502 503 504 505 506 507 508 509 510 511 512 513 514 515 516 517 518 519 520 521 522 523 524 525 526 527 528 529 530 531 532 533 534 535 536 537 538 539 540 541 542 543 544 545 546 547 548 549 550 551 552 553 554 555 556 557 558 559 560 561 562 563 564 565 566 567 568 569 570 571 572 573 574 575 576 577 578 579 580 581 582 583 584 585 586 587 588 589 590 591 592 593 594 595 596 597 598 599 600 601 602 603 604 605 606 607 608 609 610 611 612 613 614 615 616 617 618 619 620 621 622 623 624 625 626 627 628 629 630 631 632 633 634 635 636 637 638 639 640 641 642 643 644 645 646 647 648 649 650 651 652 653 654 655 656 657 658 659 660 661 662 663 664 665 666 667 668 669 670 671 672 673 674 675 676 677 678 679 680 681 682 683 684 685 686 687 688 689 690 691 692 693 694 695 696 697 698 699 700 701 702 703 704 705 706 707 708 709 710 711 712 713 714 715 716 717 718 719 720 721 722 723 724 725 726 727 728 729 730 731 732 733 734 735 736 737 738 739 740 741 742 743 744 745 746 747 748 749 750 751 752 753 754 755 756 757 758 759 760 761 762 763 764 765 766 767 768 769 770 771 772 773 774 775 776 777 778 779 780 781 782 783 784 785 786 787 788 789 790 791 792 793 794 795 796 797 798 799 800 801 802 803 804 805 806 807 808 809 810 811 812 813 814 815 816 817 818 819 820 821 822 823 824 825 826 827 828 829 830 831 832 833 834 835 836 837 838 839 840 841 842 843 844 845 846 847 848 849 850 851 852 853 854 855 856 857 858 859 860 861 862 863 864 865 866 867 868 869 870 871 872 873 874 875 876 877 878 879 880 881 882 883 884 885 886 887 888 889 890 891 892 893 894 895 896 897 898 899 900 901 902 903 904 905 906 907 908 909 910 911 912 913 914 915 916 917 918 919 920 921 922 923 924 925 926 927 928 929 930 931 932 933 934 935 936 937 938 939 940 941 942 943 944 945 946 947 948 949 950 951 952 953 954 955 956 957 958 959 960 961 962 963 964 965 966 967 968 969 970 971 972 973 974 975 976 977 978 979 980 981 982 983 984 985 986 987 988 989 990 991 992 993 994 995 996 997 998 999 1000 1001 1002 1003 1004 1005 1006 1007 1008 1009 1010 1011 1012 1013 1014 1015 1016 1017 1018 1019 1020 1021 1022 1023 1024 1025 1026 1027 1028 1029 1030 1031 1032 1033 1034 1035 1036 1037 1038 1039 104

11397

ՅԵՐԵՎԱՆ --- 1930



I. ԶԱՅՆ (ՀԱՅՅՈՒՆ)

Չափն կոչվում է այն բոլորը, ինչ վոր ընդունում է մեր ականջը, աչքինքն՝ այն բոլոր տարրեր տպավորությունները, վորոնք առաջանում են մեր լսողական նյարդերի գրգիռից, ինչպես, որինակ՝ աղմուկ, գուռ, լերդ, նվագ։ Գոյություն ունի ձայնի յերկու հիմնական տեսակ՝ յերաժեսական և վոչ յերաժեսական։

Յերաժշտական ձայն կոչվում է այն ձայնը, վորն անկախ, առանձին, առանց ուրիշ ձայնի, ունի վորոք բարձրություն, ինչպես, որինակ՝ այն ձայները, վորոնք վերարտադրվում են մարդկային ձայնով (վոկալ յերաժշտություն) և յերաժշտական գործիքներով (գործիքային յերաժշտություն)։ Մյուս բոլոր ձայները, վորոնք չունեն վորոշ բարձրություն, որինակ՝ անիվի զլրգոցը, կոչվում են վոչ-յերաժշտական ձայներ*։

Յերաժեսական հնչյունների հատկությունը

§ 1. Յերաժշտական ձայնի բնորոշ հատկություններն են—ա) տեմպությունը, աչքինքն՝ ավելի կամ պակաս շարունակելի լինելը, բ) տեմբրը, աչքինքն՝ ձայնի յերանգը, վորը լինում է տարբեր, նայած վերարտադրության միջոցին (մարդկային ձայն, գործիքի ձայն), գ) ուժը—ավելի կամ պակաս մեղմ լինելու հատկու-

*) Լսողական զգայարանքով տպավորությունները զրոյից ճիշտ ստանալու ընդունակությունը կոչվում է յերաժշտական լրատողություն։ Բոլոր մարդիկ միատեսակ չեն ունենում լրատողությամբ և միատեսակ ընդունակություն չունեն ճիշտ լսելու ձայնը՝ առանձին կամ տարբեր հաճախականություններով։ Այն անհատները, վորոնք ունենում են յերաժշտական լսողական թյամբ, հեշտությամբ, արագ ու ճիշտ կրկնում են վորեւ գործիքի վրա վերցրած ձայները թե առանձին և թե նրանց հաջորդականությունները։ Իսկ բացարձակ լսողության տեր մարդիկ, առանց գործիքի ոգնության կարողանում են վորոշել ամեն տեսակի լսելի ձայնի բարձրությունը։



309-2008

Հրատ. № 1154

Գրառեպ. № 2765 (բ) Պատ. № 327 Տիրաժ 2000

Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերհանում

թյունը, դ) բարձրությունը—ձայնի սաստկությունը աստիճանը:

Յերաժեսական ձայների անունները

§ 2. Յերաժեսության մեջ գոյություն ունեն յոթ հիմնական ձայներ, վորոնք ունեն խաղական անուններ,—դո, բե, մի, ֆա, սոլ, լյա, սի կամ լատինական տառերով՝ c, d, e, f, g, a, h և կրկնվում են պարբերաբար ամեն մի ութերորդ նոտայի վրա, տարբեր բարձրությունների վրա: Այդ տարբեր բարձրության, ըայց միասեռ ձայնը, ութերորդ նոտան, վոր կրում է սովալ նոտայի անունը, կոչվում է սովալ նոտայի վերաբերմամբ ոկսալային ձայն կամ ոկսավա (լատինական octto—ութ բառից):

Ոկսավաները աստիճանների բաժանելը

§ 3. Ոկտավայի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ձայնի տեղը, իր մոտ գտնվող ձայնի վերաբերմամբ, կոչվում է աստիճան: Ոկտավայի մեջ ինչքան հիմնական ձայն գոյություն ունի, այնքան էլ աստիճան գոյություն ունի, այսինքն՝ յոթ աստիճան: Ութերորդ աստիճանը հաշվում ենք առաջին աստիճանի կրկնողություն, տարբեր բարձրության վրա, վորի համար էլ կոչվում է ութնյակ կամ ոկտավա: Այս բոլորից պարզ է, վոր ամբողջ յերաժշտական սխառմը բաժանվում է ոկտավաների (ութնյակների), վորը մեզ հնարավորություն է տալիս բազմաթիվ յերաժշտական ձայների մեջ սահմանափակվել միայն յոթ անուններով, վոր իր հերթին հեշտացնում է ձայնի բարձրությունը վորոշելը, ինչ բարձրության էլ վորնա լինի:

Ոկսավաների անունները

§ 4. Ամենացածր ոկտավան կոչվում է սուբկոնսոկսավա կամ կրկնակի կոնսոկսավա, հետո գալիս են կոնսոկսավա, մեծ ոկսավա, փոքր ոկսավա, առաջին ոկսավա, յերկրորդ ոկսավա, յերրորդ ոկսավա, չորրորդ ոկսավա, հինգերորդ ոկսավա: Ձայները տառերով արտահայտելու հետևյալ ձևը գոյություն ունի, վոր հիմա գործածական է,—սուբկոնսոկսավայի, կոնսոկսավայի և մեծ ոկտավայի ձայները գրվում են մեծատառերով և, յերբ ուզում են արտահայտել ձայնը սուբկոնսոկսավայի մեջ, ընդգծում են տառը յերկու գծիկով,

իսկ ձայնը կոնսոկսավայի մեջ՝ մեկ գծիկով և մեծ ոկտավայի մեջ՝ առանց գծիկի:

Սուբկոնսոկսավա C, D, E, F, G, A, H,

Կոնսոկսավա C, D, E, F, G, A, H,

Մեծ ոկտավա C, D, E, F, G, A, H.

Մնացած ոկտավաների ձայները, այսինքն՝ փոքր, առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ ոկտավաների, գրվում են փոքրատառ և փոքր ոկտավայի ձայները գրվում են առանց գծիկի, իսկ մյուս ոկտավաներինը գծիկներով՝ վրայից կամ տակից:

Փոքր ոկտավա c, d, e, f, g, a, h,

Առաջին » c, d, e, f, g, a, h, կամ c, d, e, f, g, a, h,

Յերկրորդ » c, d, e, f, g, a, h, » c, d, e, f, g, a, h,

Յերրորդ » c, d, e, f, g, a, h, » c, d, e, f, g, a, h,

Չորրորդ » c, d, e, f, g, a, h, » c, d, e, f, g, a, h.

II. ԶԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Չայնանիցներ (նասներ)

§ 5. Ձայներն արտահայտելու վերոհիշյալ միջոցը, այսինքն՝ մեծատառերի ու փոքրատառերի միջոցն առաջացնում է սյն անհարմարությունը, վոր նրանցով արտահայտվում է միայն ձայնի մի հատկությունը, այն է՝ նրա բարձրությունը:

Դրա համար էլ յերաժշտական գործնականություն մեջ, թղթի վրա յերաժեսական ձայները նշանակելու համար, զորձ են անում վորոճ նշաններ, վորոնք կոչվում են նոտաներ կամ ձայնանիցներ, վորոնք յեվ հնարավորություն են տալիս արտահայտելու ձայնի վոչ միայն բարձրությունը, այլևս նրա տեղությունը, իսկ ոժանդակ նշաններով միասին՝ ձայնի ուժը և զանազան նյութանները. նոտայի նշանը կամ նոտան ձվաձև է, և նայած նրա տեղությունը, ձվաձևն արտահայտվում է տարբեր կերպով:

Տեղությունը միավոր համարվում է ամբողջ նոտան. ամբողջ նոտան հավասար է յերկու կես նոտայի, ամեն մի կեսն իր հերթին՝ յերկու քառորդի, քառորդը՝

յերկու ութերորդի, ութերորդը՝ յերկու տասնվեցերորդի, տասնվեցերորդը՝ յերկու յերեսուներկուերորդի, յերեսուներկուերորդը՝ յերկու վարսունչորորդի:

**Նոսայի սե-
վողությունը**

§ 6. Նոտայի տևողության հասկացողությանն անփոփոխ հասկացողությունն է, այլ հարաբերական. այսպես, որինակ՝ ամբողջ նոտայի տևողությունը լինում է տարբեր, նայած յերաժշտական չերկի բնութիւն կամ կատարման արագության: Իսկ տարբեր տևողության նոտաների փոխադարձ հարաբերությունն անփոփոխ հասկացողությունն է. որինակ՝ կես նոտայի տևողությունը յերկու անգամ պակաս է ամբողջ նոտայի տևողությունից: Այստեղից պարզ է, վոր յեթե ամբողջ նոտան, որինակ՝ հնչի չորս վայրկյան, ամեն մի կես նոտան կհնչի յերկու վայրկյան: **Յեթե փոխենք** ամբողջ նոտայի տևողության ժամանակը, համապատասխան դրան կփոխվի և ավելի փոքր նոտաների—կեսերի, քառորդների—տևողության ժամանակը, թեև դրանց փոխադարձ հարաբերությունը մնում է նույնը:

**Նոսաների
բաժանումը**

§ 7. Ամբողջ նոտան պարունակում է իր մեջ յերկու կես նոտա, չորս քառորդական, ութ ութերորդական, տասնվեց տասնվեցերորդական, յերեսունչորս յերեսունչորսերկուերորդական և վաթսուներորս վաթսուներորդական:

Սխեմատիկ ուրիճակ

Ամբողջ նոտան ունի՝


յերկու կես նոտա . .

չորս քառորդական . .

ութը ութերորդական

16 տասնվեցերորդակ.

32 յերեսուներկուեր.



**Նոսաների
սեվողու-
թյան փո-
քացումը**

§ 8. Նախորդ գլխում չեղան ուղիղ յերկու մասի բաժանելու դեպքեր, և տեսանք, վոր չորսաճանչուր նոտայի տևողությունը կարելի չէ բաժանել յերկուսի, չորսի, ութի, տասնվեցի, յերեսուներկուսի, վաթսուներորսի, այսինքն՝ զույգ մասերի, բայց կարող են և պատահել դեպքեր, յերբ վորեւե մասը, որինակ՝ մի քառորդը մենք բաժանենք վոչ թե յերկու, այլ յեւե մասի, այսինքն մասերի կենտ թվի, որինակ՝ մի քառորդը բաժանենք յերեք մասի, վորոնց տևողության գումարը հավասար կլինի յերկու ութերորդականների տևողության: Այդպիսի չեռամաս բաժանման յերեք նոտաների խումբը կոչվում է տրիոլ: Տրիոլները զբերելիս սովորաբար միացնում ենք աղեղով և վրան նշանակում յերեք թիվը: Այս յերեք նոտաների տևողության գումարը հավասար կլինի յերկուս բաժանման նույնպիսի նոտաների տևողության:

$$\overset{3}{\text{P}} \overset{3}{\text{P}} \overset{3}{\text{P}} = \text{O}, \quad \overset{3}{\text{P}} \overset{3}{\text{P}} \overset{3}{\text{P}} = \text{P}, \quad \overset{3}{\text{P}} \overset{3}{\text{P}} = \text{P}, \quad \overset{3}{\text{P}} \overset{3}{\text{P}} = \text{P} \text{ և այլն}$$

Պետք է ասել, վոր տրիոլներ հասկացողության մեջ մտնում է յեռամաս բաժանման ամեն տեսակի խմբավորում. պաուզաները*) նույնպես կարող են մասնել տրիոլների կազմի մեջ, փոխարինելով յերեք նոտայից մեկին կամ յերկուսին:

Տրիոլի ամեն մի նոտան յեթե բաժանենք յերկու հավասար մասի, կստանանք սեֆսոլ:

Յեթե, փոխանակ չորս հավասար նոտայի, վերցնենք հինգ նոտա, — կլինի կվինցոլ, վեց նոտան՝ սեֆսոլ, յոթ նոտան՝ սեպսիմոլ, ինն նոտան՝ ճեվեմոլ և այլն:

Այդպիսի կամավոր կերպով կազմված խմբավորումների մենք հանդիպում ենք հաճախ ժամանակակից յերաժշտության մեջ. իհարկե այստեղ չենք թվի այդպիսիները. ամեն մի ուսանող պրակտիկայում կըծանոթանա այդտեսակի խմբավորումների բոլոր ձևերին:

*) § 12. Պատգաներ:



ՆՈՏԱՆԵՐԻ
ՏԵՎՈՂՈՒ-
ՔՅԱՆ ԱԵԺԱ-
ԳՈՒՄՐ

415

§ 10. Լիզատուրայից (legato) բացի, նոտայի տեղողութունը կարող է ավելանալ և կեսով. կետը դրվում է նոտայի մոտ աջ կողմից և ավելացնում է իր մոտ գտնված նոտայի վրա այդ նոտայի տեղողության կեսը. որինսկի՝

$\therefore \circ = \circ \text{---} \rho, \rho = \rho \text{---} \rho,$

$\sigma^{\cdot\cdot} = \sigma^{\cdot} \rho^{\cdot} \rho^{\cdot}, \rho^{\cdot\cdot} = \rho^{\cdot} \rho^{\cdot} \rho^{\cdot}, \rho^{\cdot\cdot} = \rho^{\cdot} \rho^{\cdot} \rho^{\cdot} \quad \text{L. 1011}$

Skrifusn

www.gju

Պատուգա, փոր փոխարինում ե ամբողջ նոտալին

»	»	»	» $\frac{1}{4}$	»	2
»	»	»	» $\frac{1}{8}$	»	4
»	»	»	» $\frac{1}{16}$	»	8
»	»	»	» $\frac{1}{32}$	»	16
»	»	»	» $\frac{1}{64}$	»	32


Նոսայից
սիւսիմ
կամ
հնգադիծ

§ 13. Ինչպես վոր տառային նշանները—c, d, e, f, g, a, h—արտահայտում են թղթի վրա չերաժշտական ձայնի միայն մի հատկութիւնը, այսինքն ձայնի բարձրութիւնը, նոտային նշանները, կամ նոտաներն առանձին արտահայտում են չերաժշտական ձայնի մի հատկութիւնը միայն, այն է՝ նրա տեղութիւնը: Վորպեսզի ձայնի տեղութիւնը հետ միասին արտահայտվի և նրա բարձրութիւնը, նոտան դրվում է ցոսայից սխսեմի կամ ճնգագծի վորոշ տեղում. հրն-

գազիծը բաղկացած է զուգահեռ գնացող հինգ հորիզոնական գծերից:

Վորպեսզի հնգագծի վրա նոտաները ցույց տան ճիշտ կերպով վորոշ բարձրություն, պետք է պայմանական կերպով նշանակել մի վորակ ձայնի տեղը, այսինքն՝ պայմանավորվել, թե այսինչ ձայնը հնգագծի վրա բռնում է այսինչ տեղը: Մի ձայնի տեղը վորոշելուց հետո մենք հնարավորություն ենք ունենում հնգագծի վրա գտնվող մյուս նոտաների բարձրությունն ել վորոշել: Այսպես, որինակ՝ լեթե մենք գիտենանք, վոր հնգագծի յերկրորդ տողի վրա գտնվում է սոլ նոտան, ուրեմն հարևան վերևի նոտան, յերկրորդ և յերրորդ գծերի մեջ կլինի լյա նոտան, իսկ դեպի ցած, առաջին և յերկրորդ գծերի մեջ կլինի ֆա նոտան:

Հնգագծի վրա կարելի չէ տեղավորել միայն 11 ձայն, այնինչ՝ մեր գործածական ձայներն ավելի շատ են: Ձայները լինում են բարձր, միջին, ցածր. և վորպեսզի այս բոլոր գործածական ձայները տեղավորենք հնգագծի վրա, այսինքն՝ հնգագիծը լայնացնենք, ոգտվում ենք պայմանական նշանից, այն է՝ հնգագծի վերևից և ներքևից ավելացնում ենք փոքրիկ գծեր, վորոնք կոչվում են օժանդակ գծեր:




Բանալի-ներ


§ 14. Սակայն ոժանդակ գծերի մեծ քանակությունը դժվարացնում է նոտաների ընթերցումը: Ինչպես վերն ասացինք, գործածական ձայները շատ են, և հնգագծի վրա նրանց գործածությունը կպահանջեր չափազանց շատ ոժանդակ գծեր: Վորպեսզի ավելի պարզեցնենք յերաժշտական ձայների արտահայտությունը, վորով և կհեշտանա նոտաների ընթերցումը, յերաժշտության մեջ գործածում ենք հասուկ պայմանական նշաններ, վորոնք կոչվում են բանալիներ: Այդ

բանալիներից ամենաշատ գործածականներն են՝ ջութակի բանալի (սոլ բանալի) և բասի բանալի (ֆա բանալի): Դրանք առաջ են լեկել հետևյալ ձևով—յերկու հնգագիծ՝ գրված մեկը մյուսի յետևից, միացված են մի ընդհանուր նոտայով, առաջին ոկտավայի դա նոտայով, վորը միաժամանակ թե ներքևի հնգագծի ամենաբարձր նոտան է և թե վերևի հնգագծի ամենացածր նոտան: Յեթե դասավորենք նոտաները, առաջին ոկտավայի դա-ից աստիճաններով դեպի վեր, յերկրորդ տողի վրա կստանանք սոլ նոտան. այստե-

ղից ել կոչվում է սոլի բանալի , վորը շրջափակում է յերկրորդ տողը. և առաջին ոկտավայի դո-ից ներքև, ցածրի հնգագծի չորրորդ տողի վրա, կստանանք ֆա նոտան, այստեղից ել բասի բանալին,

, վորը շրջափակում է չորրորդ տողը:

Այս յերկու բանալիների միջոցով կարելի չէ հրեզագծի վրա արտահայտել յերաժշտության մեջ գործածվող բոլոր ոկտավաները:



Վերը մատնաբշված և ներկայումս գործածվող բանալիներից բացի, առաջ գործ էլին ամվում, մասնավորապես վոկալ յերաժշտության համար (հետադաշում և ինստրումենտալ յերաժշտության համար) և ուրիշ բանալիներ, վորոնք նոտային սխառմը հարմարեցնում էին մի վորոշ ձայնի: Դրանցից պետք է գիտենալ դա բանալին, վորը զրվելով հնգագծի մի

գծի վրա՝ ցուցց ե տալիս առաջին ոկտավայի դո-յի տեղը: Յեթե այդ բանալին դրված ե առաջին գծի վրա, կոչվում ե սոպրանոյի բանալի, յերրորդ գծի վրա՝ ալտի բանալի, չորրորդ գծի վրա՝ տենորի բանալի:

Այս բանալիների անունները ցուցց են տալիս, վոր դրանք դորժածվելիս են չեղել համապատասխան ձայների համար: Ինչպես արդեն ասացինք, բանալիներն առաջ են յեկել այն պատճառով, վոր հնարավոր չի չեղել հնգագծի վրա տեղավորել յերաժշտության մեջ գործածվող բոլոր ձայները: Բանալիները մեղ հրնարավորություն են տալիս տեղավորել սարբեր բարձրության ձայներ, համաձայն այս կամ այն գործիքի ծավալին, գրեթե առանց ոժանդակ գծերի: Այսպես, որինակ՝ առաջին ոկտավայի դո-ն սոպրանոյի համար (այսինքն՝ ամենաբարձր ձայների համար) հանդիսանում ե ամենացածր նոտան. սոպրանոն կարող ե այդ առաջին ոկտավայի դո-յից բարձր վերցնել մի ոկտավա ե կես ես, իսկ դեպի ցած վերցնելու կարելի չի լինում. առաջնորդվելով այս տեսակետով՝ դո-յի բանալին դրել են առաջին գծի վրա, վորպեսզի հնարավորություն ունենանք առաջին ոկտավայի դո յից բարձր հնչած նոտաները տեղավորել մնացած տողերի վրա, առանց ոժանդակ գծերի ոգնության. այստեղից ել առաջին գծի դո-յի բանալին կոչվում ե սոպրանոյի բանալի:

Փոքր ոկտավա

1-ին ոկտավա



լյա, սի, դո, բե, մի, ֆա, սոլ, լյա, սի, դո

Առաջին ոկտավայի դո-ն, ալտի համար (միջին ձայնի համար), հանդիսանում ե վոչ ամենացածր նոտան, ինչպես սոպրանոյի համար եր, այլ միջին, դրա համար ել դո-յի բանալին դնելով յերրորդ տողի վրա,

հնարավորություն ենք ունենում առաջին ոկտավայի դո-յից ցած հնչող նոտաները տեղավորել յերրորդ գծից ներքև յեղող յերկու գծերի վրա, իսկ դո-յից բարձր հնչող նոտաները տեղավորել յերրորդ գծից վերև:

Փոքր ոկտավա

1-ին ոկտավա



բե, մի, ֆա, սոլ, լյա, սի, դո, բե, մի, ֆա

Տենորի ռեգիստրը հնչում ե գրեթե այնպես, ինչպես ե սոպրանոյինը, միայն մի ոկտավա ցած, ե առաջին ոկտավայի դո-ն տենորի համար հանդիսանում ե արդեն վոչ թե ամենացածր կամ միջին նոտա, ինչպես դա սոպրանոյի ե ալտի համար եր, այլ համեմատաբար ավելի բարձր. դրա համար ել դո նոտան, այսինքն դո-յի բանալին դրվում ե չորրորդ գծի վրա:

Փոքր ոկտավա

1-ին ոկտավա



սի, դո, բե, մի, ֆա, սոլ, լյա, սի, դո, բե

Բացի այս բանալիներից՝ յերաժշտության մեջ գործ ելին ամբողջ ե մեցյու-սոպրանոյի, բարիտոնի, բաս-պրոֆուրի ե հին ֆրանսիական բանալիներ, բայց ժամանակակից յերաժշտության մեջ այդ բանալիները չեն գործածվում, ինչպես նաեւ կամաց-կամաց անգործածական են դառնում սոպրանոյի ե տենորի բանալիները:

Ժամանակակից յերաժշտության մեջ գործած-

վում են ջութակի, բասի և ալտի բանալիները: Ալտի բանալին գործածվում է զլխավորապես ինստրումենտալ լերաժառույթյան մեջ. բայց կլասսիկ լերաժառույթյան գրականութանը ծանոթանալու համար անհրաժեշտ է ծանոթ լինել բոլոր բանալիներին հետ:

III. Չ Ա Փ

Ցալս

§ 15. Ամեն մի լերաժեսական յեղ բաժանվում է համաչափ մասերի, վորոնք կոչվում են ցալսեր և վորոնք բաժանվում են իրարից տակտի գծով:

Ակցենս
(aces)

§ 16. Յերաժառույթյան յերկի կատարման ժամանակ, վորպեսզի կարողանանք ամեն նոր տակտի ըսկզբը լսել, ընդունված է շեշտավորել—ակցենս դնել ցալսի առաջին մասի վրա, դրա համար էլ տակտի առջին մասը կոչվում է ուժեղ մաս:

Ռիթմ

§ 17. Ռիթմ կոչվում է ձայների միասեռակ ու արբեր սեփոփոխյան համաչափ հերակաճությունը, համաչափ հաշվով, վորն իր հիմքում պահպանում է լերաժառույթյան յերկը կազմող մեծ ու փոքր մասերի սիմմետրիան:

Չափ

§ 18. Յերկի չափը ցույց է տալիս բանալիից հետո անմիջապես դրվող թվային կոտորակը. կոտորակի համարիչը ցույց է տալիս, թե ինչքան մաս կա տակտում, իսկ հայտարարը՝ թե վոր մասն է ընդունված իբրև ժամանակի միավոր: Չափերը բաժանվում են յերեք խմբի՝ 1) պարզ, 2) բարդ, 3) խառն:

Պարզ չափերը բաժանվում են յեղմաս և յեղմաս չափերի, պարզ յերկմաս չափերին են վերաբերում այնտեսակ չափերը, վորոնց համարիչն է յերկու թիվը.— $\frac{2}{1}$ $\frac{2}{2}$ $\frac{2}{4}$ $\frac{2}{8}$ $\frac{2}{16}$ $\frac{2}{32}$ $\frac{2}{64}$:

Պարզ յեղմաս չափերին են պատկանում այն չափերը, վորոնց համարիչն է յերեք թիվը.—

$$\frac{3}{1} \quad \frac{3}{2} \quad \frac{3}{4} \quad \frac{3}{8} \quad \frac{3}{16} \quad \frac{3}{32} \quad \frac{3}{64}$$

Միջանի պարզ յերկմաս չափերի գումարը

տալիս է բարդ յերկմաս չափ. որինակ՝

$$\frac{2}{4} + \frac{2}{4} = \frac{4}{4} \text{ (C)}, \quad \frac{2}{8} + \frac{2}{8} = \frac{4}{8}, \quad \frac{2}{8} + \frac{2}{8} + \frac{2}{8} = \frac{6}{8}:$$

Միջանի պարզ յեղմաս չափերի գումարը

տալիս է բարդ յեղմաս չափ. որինակ՝

$$\frac{3}{4} + \frac{3}{4} = \frac{6}{4}, \quad \frac{3}{8} + \frac{3}{8} + \frac{3}{8} = \frac{9}{8}:$$


Յերկմաս չափերի և յեղմաս չափերի գումարը կամ յեղմաս ու յերկմաս չափերի գումարը տալիս է խառն չափ:

Չափերի սխեման

Պ ա Ր Ղ								Բ ա Ր Ղ							
Յերկմաս				Յեղմաս				Յերկմաս				Յեղմաս			
2	2	2	2	3	3	3	3	4	4	4	4	6	6	6	6
1	2	4	8	1	2	4	8	2	4	8	16	1	2	4	8
2	2	2		3	3	3						9	9	9	9
16	32	64		16	32	64						1	2	4	8

Խառն չափ 5 5 5 5 7 7 11 և այլն:

Բարդ չափերում այնքան ուժեղ մաս կա, այնքան այնքան շեշտված մաս, ինչքան պարզ չափ են պարունակում, միայն այն տարբերությամբ, վոր ներառեցից առաջինն ստանում է ավելի ուժեղ շեշտ, քան յերկրորդը. որինակ՝



Կրկնակի բարդ չափ կոչվում է այն չափը, վոր կազմված է յերկու բարդ չափերից:


Խմբավորում
(գումարակա-
րակա)

§ 19. Յեթե մի տակտում հանդիպում են մանր նոտաներ, որինակ՝ ութերորդականներ, տասնվեցերորդականներ, յերեսուներկույրորդականներ, վաթսուհորրորդականներ, այն ժամանակ այդ տեսակ նոտաները միանում են մի ընդհանուր գծով, վորը շատ հեշտացնում է թե կատարումը և թե ընթերցումը: Մանր խմբերի միացումը պիտի համապատասխանի նրանց զլխավոր մասին, վորն արտահայտում է

հայտարարը, այսպես, որինակ՝ յեթե հայտարարը ցույց է տալիս, վոր իբրև ժամանակի միավոր ընդունված է մի քառորդականը, այն ժամանակ ավելի մանր նոտաները, ինչպես, որինակ՝ ութերորդականները, տասնվեցերորդականները և այլն, պետք է խմբավորվեն այսպես, վոր ստացվեն մի քառորդականներ, և միացվում են ընդհանուր գծով, և այդ գծի քանի հատ լինելը կախված է այն բանից, թե դրանք ութերորդական, տասնվեցերորդական, յերեսուներկույերորդական թե վաթսուներորդական մասեր են. ութերորդականները միանում են մի գծով, տասնվեցերորդականները՝ յեքկու գծով, յերեսուներկույերորդականները՝ յեքեք գծով և այլն:



Բարդ տակտերում, մանր նոտաները խմբավորելու ժամանակ, աշխատում են խմբերը հավասարեցնել պարզ տակտերի: Ավելի մանր չափերի բաժանման ժամանակ, վորպեսզի կատարումն ավելի հեշտ լինի, միևնույն ժամանակ և շեշտադրության համար, կարիք է զգացվում ստորաբաժանման և կողմնակի մասերի. որինակ՝



Տակտում գտնված պարզաները նույնպես մըտնում են խմբավորումների մեջ: Յերբ այսպես մանր նոտաները միացնում ենք ու վերածում մի խմբի, կոչվում է գրուպպիրովկա (խմբավորում):

Սիկկոպ


§ 20. Յերբ եբեսք ակնյի ուժեղ մասից սեղափոխվում է բույլ մասի վրա, կոչվում է սիկկոպ: Այս տեսակի տեղափոխություն լինում է այն ժամանակ, յերբ տակտի ուժեղ մասում կամ բոլորովին նոտա չկա, կամ յեթե կա չի, այդ նոտան շարունակությունն է նախորդ ձայնի, վոր գտնվում է նախորդ պարզ տակտում. ուրիշ կերպ ասած՝ սինկոպն այն նոտան է, վոր

յերևան է գալիս տակտի թույլ մասի վրա և շնորհիվ իր յերկարության բռնում է հաջորդող տակտի ուժեղ մասը: Սինկոպները կարող են լինել յերկմաս ու յեռամաս չափի՝ թե պարզ և թե բարդ չափի տակտերում:



Նախասակս

§ 21. Յերբեմն յերաժշտական յերկն սկսվում է վոչ լրիվ տակտով. այդտեսակ վոչ լրիվ տակտը կոչվում է նախասակս: Նախատակտով սկսված յերկի վերջում ևս լինում է վոչ լրիվ տակտ, վորտեղ բացակայում է տակտի այն մասը, վոր կազմում է նախատակտ, այսինքն՝ նախատակտը և վերջին տակտը միասին իրենց տևողությունը պիտի հավասար լինեն լրիվ տակտին, համաձայն յերկի չափին. որինակ՝



Տեմպ

§ 22. Յերաժշտական յերկի կատարման արագությունն աստիճանը կոչվում է տեմպ. արագությունն աստիճանն արտահայտող բառերը մեծ մասամբ գործ են ածվում իտալերեն. ամենից շատ գործածական դարձվածքներն են.—

Դանդաղ	Միջակ	Արագ	Շատ արագ
Largo—յերկարացրած	Andante—վոչ շատ դանդաղ	Allegro—արագ	Vivo—աշխուժ, արագ
Adagio—շատ ծանր	Moderato—չափավոր	Allegretto—ուրախ	Presto—շատ արագ
Lento—դանդաղ	Sostenuto—զսպված	Animato—վոգեղոված	
Grave—ծանրաշուք			

309-1008



Այս տերմինները շատ հաճախ գործ են ածվում գերադրական աստիճանով, որինակ՝ vivacissimo, prestissimo, կամ նրանց ավելացվում է poco, meno (քիչ, պակաս) կամ non troppo (վնչ շատ)։

Ձայնի ուժը § 23. Ձայնի ուժի աստիճանը նույնպես նշանակվում է պայմանական նշաններով։—

Forte — ուժեղ (կրճատված՝ f)։

Fortissimo — շատ ուժեղ (կրճատված՝ ff)։

Poco forte — մի քիչ ավելի ուժեղ (կրճ.՝ p. f.)։

Mezzo forte — միջակ ուժեղություն (կրճ.՝ m. f.)։

Piano — մեղմ (կրճատված՝ p.)։

Pianissimo — շատ մեղմ (կրճատ.՝ p. p.)*։

IV. ԱՄԲՈՂՋ ՏՈՆ ՅԵՎ ԿԻՍԱՏՈՆ

Ինչպես վերն ասվեց, յերաժշտության մեջ կա յոթ հիմնական ձայն, վորոնք ունեն իտալական անուններ—դո, ըե, մի, ֆա, սոլ, լյա, սի կամ համապատասխան իտալական անուններին՝ տառերով—c, d, e, f, g, a, h։ Ամեն մի հիմնական ձայն տարբերվում է մյուս հիմնական ձայնից իր բարձրությանը կարող է լինել ավելի կամ պակաս։ Ձայների միջի տարածությունը չափվում է տոներով և կիսատոներով։

Կիսասոն § 24. Կիսասոն յեվրոպական յերաժշտության մեջ յեվ ամբողջ **յեվ ամբողջ** **սոն** կոչվում է յերկու տարբեր ձայների միջի ամենակարճ տարածությունը**։ Յերկու կիսատոն կազմում են մի

*) Դասագրքում անհնարին է մեջ բերել բոլոր յերաժշտական տերմինները, վորովհետև շատ տեղ կլուներ։ Այն ուսանողներին, վորոնք հետաքրքրվում են յերաժշտական տերմինոլոգիայով, հանձնարարվում է ունենալ ձեռքի տակ յերաժշտական բառարան, որինակ՝ հետևյալ բառարանները—«Музыкально-энциклопедический словарь» Римана, «Музыкальная терминология» Гарраса, «Спутник музыканта» В. Калафати և ուրիշներ։

**) Արևելքի ժողովուրդների յերգերի մեջ պատահում են ավելի պակաս տարածություններ, քան կես տոնն է. դա յե պատճառը, վոր մի շարք ժողովուրդների յերգերը ձայնագրելն անհրաժեշտ է, ինչպես անհնարին է և նրանց կատարումը յեվրոպական գործիքներով։

ամբողջ սոն, և ամբողջ տոնը կարող է բաժանվել յերկու կիսատոների։ Յոթը հիմնական տոներից յերկուսը կիսատոներ են.

դո¹ ըե¹ մի^{1/2} ֆա¹ սոլ¹ լյա¹ սի^{1/2} (դո)

Դիեզ յեվ բեմոլ

§ 25. Հիմնական ձայներից ամեն մեկը կարող է ձևափոխվել ձայնը բարձրացնող կամ իջեցնող նշանի միջոցով։ Ձայնագրության մեջ ձայնը բարձրացնող նշանը կոչվում է դիեզ, իսկ ձայնն իջեցնող նշանը՝ բեմոլ. այն ձայները, վորոնք փոխվում են այս նշանների միջոցով, ինքնուրույն աստիճաններ չեն կազմում, դրա համար ել չունեն ինքնուրույն անուններ։ Ձայնագրության մեջ բարձրացնող ու իջեցնող նշանները գրվում են նոտայի առաջը, բայց կարգացվում են նոտայից հետո, որինակ՝ դո-դիեզ, ըե-բեմոլ և այլն։

Ռեկար

§ 26. Ձայնը բարձրացնելու կամ ցածրացնելու կարիքը վերջանալուց հետո գրվում է դիեզը կամ բեմոլը վոչնչացնելու նշանը, վոր կոչվում է բեկար։

Դուրբիեզ յեվ դուրբեմոլ

§ 27. Հիմնական ձայները կես տոն բարձրացնելուց և կես տոն իջեցնելուց բացի, յերաժշտության մեջ գործ է ածվում և կրկնակի բարձրացում—դուրբ-դիեզով և կրկնակի իջեցում—դուրբեմոլով. ամեն մի հիմնական աստիճան կրկնակի բարձրացման և կրկնակի իջեցման ժամանակ փոխվում է յերկու կիսատոնի տարածությամբ, այսինքն՝ մի ամբողջ տոնով. որինակ՝ ֆա դուրբիեզը լսողությանը համապատասխանում է սոլ-ին, լյա դուրբիեզը՝ սի նոտային և այլն։

Դիեզ նշան . . .	#	նոտան բարձրացնում է կես տոն.
Դուրբիեզ նշան .	x	» » ամբողջ »
Բեմոլ նշան . . .	b	» իջեցնում է կես »
Դուրբեմոլ նշան	bb	» » ամբողջ »
Բեկար նշան . . .	q	վոչնչացնում է բարձր. և իջեցմ. նշ.


Տառային սիստեմի ժամանակ կես տոն բարձրացման համար այդ տառին ավելացնում են is վան-

կը, իսկ կես տոն իջեցնելու ժամանակ ավելանում է es վանկը. կրկնակի բարձրացման ժամանակ, աչսինքն ամբողջ տոն, ավելանում է isis, իսկ կրկնակի իջեցման՝ eses.

cis—դո	#	cisis—դո	×
dis—րե	##	disis—րե	×
eis—մի	#	eisis—մի	×
fis—ֆա	##	fisis—ֆա	×
gis—սոլ	##	gisis—սոլ	×
ais—լյա	##	aisis—լյա	×
his—սի	#	hisis—սի	×

ces—դո	b	ceses—դո	bb
des—րե	b	deses—րե	bb
es—մի	b	eses—մի	bb
fes—ֆա	b	feses—ֆա	bb
hes—սոլ	b	geses—սոլ	bb
as*—լյա	b	asas—լյա	bb
b*—սի	b	bb—սի	bb

Դուրբլիները և դուրբիսները վոչնչացվում են կրկնակի բեկարով, իսկ յեթե դուրբլիները կամ դուրբիսները ուղղում ենք մեկ դիեզը կամ մեկ բեմոլը վոչնչացնել, այն ժամանակ հաջորդ համանուն նոտայի առաջ դնում ենք և բեկար և մեկ դիեզ կամ բեկար և մեկ բեմոլ:




Ենհարմո-
նիզ

§ 28. Միևնույն ձայնը կարելի չի արտահայտել և տարբեր ձևով, փոխելով ձայնը բարձրացնող կամ իջեցնող նշանները. որինակ՝

*) Բարենայուն լինելու համար aes-ը փոխվում է ասի, և տառն ընկնում է:

**) Իբրև բացառություն, hes-ին փոխարինում է b տառը:



Այն դեպքում, յերբ միևնույն հնչյունը, ձայնը արտահայտվում է թղթի վրա տարբեր ձևով և կրում է տարբեր անուն, կոչվում է ենհարմոնիզմ: Այն ձայնները, վորոնք տարբեր են անուններով ու գրելու ձևով, բայց միևնույնն են լսողութան համար, կոչվում են ենհարմոնիկ տներ, իսկ ձայնի այդ փոփոխումը կոչվում է ենհարմոնիկ փոփոխում:

Նորմատիկ § 29. Այն կիսատոները, վորոնք կազմվում են յեկ իբար կից աստիճաններից, կոչվում են դիատոնիկ կիսատոներ, իսկ այն կիսատոները, վորոնք կազմվում են նույն աստիճանների վրա, կոչվում են խրոմատիկ կիսատոներ. որինակ՝

Դիատոնիկ կիսատոներ



խրոմատիկ կիսատոներ



V. ԳԱՍՍԱՆԵՐ

Դամմաներ § 30. Աստիճանաբար բարձրացող ձայների շարք կոչվում է գամմա. ժամանակակից գամմայի հիմքը կազմում է հին հունական տետրախորդը:

Տեսրախորդ § 31. Չորս ձայների աստիճանական հաջորդականությունը կոչվում է տեսրախորդ: Տետրախորդները թըվով յերեք ելին, վորոնք տարբերվում են իրարից իրենց կազմութամբ. առաջինը կոչվում էր լիդիական, յերկրորդը՝ փոյուզիական և յերրորդը՝ դորիական:



Սկզբներում տետրախորդները ծառայել են դեկլամացիոն ընթերցման համար, իսկ հետագայում, յերաժշտական արվեստի զարգանալով, տետրախորդները ծառայեցին իբրև հիմք մեր գամմաների և ընդարձակվեցին հետևյալ ձևով: Արդեն գոյություն ունեցող չորս ձայների աստիճանական հաջորդականությունը շարունակվեց հետևյալ չորս ձայների հաջորդականությամբ ևս: Այսպիսով ստացվեց ութ ձայների մի շարք, վոր կոչվում էր հին հունական լադ: Միջին դարերի սկզբներին չվրոպացիները վերցրին այդ լադերն առանց վորևե փոփոխության յենթարկելու. այդ ժամանակից կոչվեցին յեվրոպական լադեր: Լադերի այդ սիստեմն իշխում էր մինչև XVII դարը. բոլոր չեկեղեցական լադերից պետք է գիտենալ յերկուսը—իոնիական և եոլական.



Ժամանակակից յերաժշտության մեջ գամմաները բաժանվում են յերկու հիմնական տեսակի—դիատոնիկ և խրոմատիկ:

Դիատոնիկ
գամմա

§ 32. Դիատոնիկ գամման բաղկացած է ամբողջ տոներից և դիատոնիկ կիսատոներից և իր աստիճանների մեջ խրոմատիզմ չի պարունակում, այսինքն՝ խրոմատիկ կիսատոներ, վոր կազմված է, ինչպես

հայտնի չի, հենց միևնույն աստիճանների վրա: Դիատոնիկ գամմաների յերկու հիմնական տեսակ կա—մաժոր չել մինոր գամմաներ, վորոնք բաժանվում են զըլխավոր և կողմնակի աստիճանների և կրում են հետևյալ անունները.

Գամմաների աստիճանություններ

§ 33.

Գլխավոր աստիճաններ

I աստ. ցածր տոնիկա
IV » սուբդոմինանտ.
V » դոմինանտ
VIII » բարձր տոնիկա

II աստ. յերկրորդ
III » վերին մեղիանտա
VI » ցածր »
VII » լուծվող նոտա

Մաժոր
գամմա


§ 34. Մաժոր գամման բաղկացած է յերկու միանման կազմություն ունեցող տետրախորդներից և ունի հետևյալ կազմությունը. 1 տոն, 1 տ., $1\frac{1}{2}$ տ., 1 տ., 1 տ., 1 տ., $1\frac{1}{2}$ տ.:



Գիտենալով այս հաջորդականությունը, հնարավորություն ունենք կազմելու նման գամմաներ վորևե տոնից և անհրաժեշտ հաջորդականությունը պահելու համար վործ ենք ածում բարձրացման և իջեցման նշանները:

Ամեն մի մաժոր գամմայի վերևի տետրախորդը կազմում է հետևյալ նոր կազմվելիք գամմայի ներքևի տետրախորդը, և այսպիսով նոր գամմայի հիմնական տոնը լինում է իր նախընթաց գամմայի V աստիճանը. ուրիշ կերպ ասած՝ ամեն մի գամմայի V աստիճանը դառնում է հետևյալ գամմայի հիմնական նոտան: Որինակ՝ վերցնենք դոմաժոր գամմայի վերին


տետրախորդը—սոլ, լյա, սի, դո. շարունակենք կառուցել նոր գամման, ավելացնելով դրա վրա վերին տետրախորդը, վերը ցույց տված տոները ու կիսատոները հաջորդականությամբ պահելով, վորը համար անհրաժեշտ է բարձրացնել վերին տետրախորդում ֆա նոտան, այսինքն՝ նոր գամմայի Vlll աստիճանը. այսպիսով ստանում ենք նոր գամմա սոլ, լյա, սի, դո, բե, մի, ֆա-դիեզ, սոլ, այսինքն՝ սոլ-մաժոր մի բարձրացնող նշանով, այն է՝ ֆա-դիեզ: Յեվ այսպես, յեթե սոլ-մաժոր գամմայի վերին տետրախորդը—բե, մի, ֆա-դիեզ, սոլ—ընդունենք իբրև ներքևի տետրախորդ հետևյալ գամմայի և վրան ավելացնենք նոր վերին տետրախորդ լյա, սի, դո-դիեզ, բե, տոները և կիսատոների անհրաժեշտ հաջորդականությամբ պահելով համար Vlll աստիճանի դո-ն բարձրացնում ենք: Այսպիսով ստանում ենք և յերկրորդ գամման բե-մաժոր յերկու դիեզով—ֆա-դիեզ և դո-դիեզ. նույն ձևով կազմվում են և հետևյալ գամմաները—լյա-մաժոր յերեք դիեզով (ֆա, դո, սոլ), մի-մաժոր չորս դիեզով (ֆա, դո, սոլ, բե), սի-մաժոր հինգ դիեզով (ֆա, դո, սոլ, բե, լյա) և ֆա-դիեզ-մաժոր վեց դիեզով (ֆա, դո, սոլ, բե, լյա, մի):




Յեթե շարունակենք այսպես կառուցել գամմաները, աստիճանաբար շատացնելով դիեզների թիվը, կստանանք շատ դիեզներով գամմաներ, վորն, ինչպես հայտնի յե, շատ է դժվարացնում նոտաների ընթերցումը. գամմաներն ավելի պարզ ձևով արտահայտելու համար գործնականում ընդունված է գործածել միայն այնպեսակ գամմաներ, վորոնք ունեն վոչ ավել, քան 6-7 նշան: Դրա համար դիեզներով գամմաներում, ֆա-դիեզ-մաժորը, վորն ունի վեց դիեզ, են-

հարմոնիկ ձևով դիեզները փոխարինվում են իջեցնող նշաններով՝ բեմոլներով, և այսպիսով ստացվում է սոլ-բեմոլ-մաժոր գամման վեց բեմոլով, ենհարմոնիկ ձևով հավասար ֆա-դիեզ-մաժոր գամմային:

Ֆա-դիեզ-մա-
ժոր վեց դիե-
զով



Սոլ-բեմոլ-
մաժոր վեց
բեմոլով



Յեթե տետրախորդների նմանողությամբ վրա հիմնվելով՝ շարունակենք կազմել նույն կարգով հետևյալ գամմաները, կստացվի հակառակ յերեռությամբ, այսինքն՝ բեմոլների թիվն աստիճանաբար կպակասի, և այսպիսով հասնելով հիմնական գամմային—դո-մաժոր, խուսափած կլինենք 6 ից ավելի նշան ունեցող գամմաներից:

Հարմոնիկ
մաժոր
գամմա

§ 35. Բացի վերը հիշված դիատոնիկ գամմաներից յեկրրդական յերաժշտության մեջ գործ է ածվում մաժոր գամմայի յերկրորդ տեսակը, այն է՝ հարմոնիկ մաժոր գամմա, վորը տարբերվում է բնական մաժորից նրանով, վոր VI աստիճանն իջեցրած է: Ուրեմն VI աստիճանն իջեցնելով՝ ամեն մի բնական մաժոր գամմա կարող է դառնալ հարմոնիկ մաժոր գամմա, վորի կազմությունն ունի հետևյալ ֆորմուլան.—



Մաժոր գամմաներ



Քննելով վերը բերված գամմաները, մենք տեսնում ենք, Վոր բանալիին մոտ դիտենքն առաջ են գալիս հետևյալ կարգով.—Փա-դիեզ, դո-դիեզ, սոլ-դիեզ, բե-դիեզ, լյա-դիեզ և մի-դիեզ, իսկ բեմոլները՝ սի-բեմոլ, մի-բեմոլ, լյա-բեմոլ, բե-բեմոլ, սոլ-բեմոլ և դո-բեմոլ:



Տառային անուններով մաժոր բառը կոչվում է «dur», որինակ՝ C-dur, G-dur, D-dur և այլն, կամ ուղղակի գրվում է մեծատառ C, G, D և այլն, վորը նշանակում է համանուն մաժոր գամման:

Բնական մինոր գամմա

§ 36. Ինչպես վերն ասվեց, բնական մինոր գամմայի հիմքը կազմում է եռական լադը, վորը բաղկացած է չերկու տարբեր կազմություն ունեցող տետրախորդներից, այն է՝ առաջին տետրախորդը 1 տոն, $1\frac{1}{2}$ տ., 1 տ. և չերկրորդը՝ $1\frac{1}{2}$ տ., 1 տ., 1 տ., ուրիշ կերպ ասած՝ բնական մինոր գամման կազմվում է վորելի մաժոր գամմայի VI աստիճանից և այդ կապի հետևանքով, իրենց փոխադարձ հարաբերության պատճառով, մաժոր գամման և համապատասխան մինոր գամման կոչվում են զուգահեռ գամմաներ: Որինակ՝ դո-մաժոր գամմայի զուգահեռ մինոր գամման կլինի լյա-մինոր, վորովհետև դո-մաժոր գամմայի VI աստիճանը կլինի լյա նոտան:

Զուգահեռ գամմաներ



Նույն ձևով և մնացած մաժոր գամմաները կունենան համապատասխան զուգահեռ մինոր գամմաները, վորոնք կունենան բանալիին մոտ նույն թվով և նույն տեսակ նշաններ, ինչ վոր զուգահեռ մաժորն ունի:


Հարմոնիկ մինոր գամմա

§ 37. Հարմոնիկ մինոր գամման բնական մինոր գամման է՝ ձևափոխված, այսինքն՝ մեղրիկ կաղենցիա ստանալու համար (լուծվող նոտայի) բարձրացվում է VI և VII աստիճանների մեջ ստացվում է բնորոշ տարածություն, այն է՝ $1\frac{1}{2}$ տոն. ուրեմն հարմոնիկ մինոր գամման ունի հետևյալ ֆորմուլան. 1 տոն, $1\frac{1}{2}$ տ., 1 տ., 1 տ., $1\frac{1}{2}$ տ., $1\frac{1}{2}$ տ., $1\frac{1}{2}$ տ. և տարբերվում է մաժոր գամմայից III և VI աստիճաններով:



Մեղրդիկ մինոր գամմա

§ 38. Հարմոնիկ մինոր գամմայի VI և VII աստիճանների միջի $1\frac{1}{2}$ տոն տարածությունը չեր հաճապատասխանի դիատոնիկ գամմայի հասկացողությանը, ել չենք խոսում այն մասին, վոր վորոշ զրգվաբուծյուն և առաջ բերում չերգեցողության և խիստ վոճով ներդաշնակելու համար: Այս հանգամանքը պատճառ և դառնում, վոր առաջ և գալիս մինոր գամմայի մի նոր ձևը, այն է՝ բացի բնական մինոր գամմայի VII աստիճանը բարձրացնելուց, բարձրացնում ենք և VI աստիճանը, վորպեսզի այդ աստիճանների միջի տարածությունը լինի վոչ թե $1\frac{1}{2}$ տոն, այլ մեկ տոն: Այն մինոր գամման, վորի VI և VII աստիճանները բարձրացված են, կոչվում և մինոր մեղրդիկ գամմա և տարբերվում և նրանով, վոր գամման բարձրանալու ժամանակ VI և VII աստիճանները բարձրացված են և ունեն հետևյալ ֆորմուլան. 1 տոն, $1\frac{1}{2}$ տ., 1 տ., 1 տ., 1 տ., 1 տ., $1\frac{1}{2}$ տ., իսկ իջնելու ժամանակ նրման և բնական մինոր գամմայի, այսինքն՝ իջնում և դիատոնիկ կարգով, առանց վորևե խրոմատիկ փոփոխությունների:



Մինոր գամմաներ



Տառային անուններով մինոր բառը կոչվում է «moll», որինակ՝ c-moll, g-moll, d-moll և այլն, կամ ուղղակի գրվում և փոքրատառ c, g, d և այլն, վորը նշանակում և համաուն մինոր գամման:

Խրոմատիկ գամմա

§ 39. Խրոմատիկ գամման բաղկացած և հաջորդաբար գնացող խրոմատիկ յեվ դիատոնիկ կիսասոներից: Մաժուրում խրոմատիկ գամման գրվում և հետևյալ ձևով՝ դեպի վեր բարձրանալու ժամանակ բոլոր աստիճանները բարձրանում են, բացի III յեվ VI աստիճաններից. գամմայի III աստիճանը մնում և անփոփոխ, իսկ VI աստիճանը, բարձրանալու փոխարեն, իջնում և VII աստիճանը: Դեպի ցած իջնելու ժամանակ բոլոր աստիճաններն իջնում են, բացի V յեվ VIII աստիճաններից, VIII աստիճանը մնում և անփոփոխ, իսկ V աստիճանը, իջնելու փոխարեն, բարձրանում և IV աստիճանը: Որինակ՝ զրենք դոմաժոր դիատոնիկ գամմա և նշա-

նակենք նոտաների տակը՝ աստիճանները, իսկ այն աստիճանները, վոր մնում են անփոփոխ, նշենք աստղով, ուրեմն դեպի վեր III և VI, իսկ դեպի ցած VIII և V աստիճանները. համապատասխան աստիճանները խրոմատիկ նշաններով բարձրացնելով ու իջեցնելով՝ կստանանք դո-մաժոր խրոմատիկ դամմա՝ հետեյալ ձևով.—




Մինչդուռ խրոմատիկ գամման գրվում է հետեւյալ ձևով. — Վեր բարձրացնելով ժամանակ բնական մինոր գամմայի բոլոր աստիճանները բարձրացնում են, բացի I յեւ V աստիճաններից. I աստիճանը բարձրանալու փոխարեն իջնում է յերկրորդ աստիճանը, իսկ V աստիճանը մնում է անփոփոխ:

Դեպի ցած իջնելու ժամանակ բնական մինոր գամման գրվում է ճիշտ աչնպես, ինչպես համանուն մաժոր գամման, այսինքն՝ բոլոր աստիճաններն իջնում են, բացի V յեւ VIII աստիճաններից, VIII աստիճանը մնում է անփոփոխ, և V աստիճանն իջնելու փոխարեն բարձրանում է IV աստիճանը. որինակ՝ գրենք լյա-մինոր բնական մինոր գամման և աչնպես, ինչպես խրոմատիկ մաժոր գամման կազմելու ժամանակ, նշանակենք նոտաների տակ աստիճանները և վերը հիշված որեւէ համաձայն աստղեր դնենք այն աստիճանների մոտ, վոր մնում են անփոփոխ, ուրեմն դեպի վեր I և V աստիճանները, իսկ դեպի ցած VIII և V աստիճանները. դեպի ցած իջնելու ժամանակ բնական մինոր գամման կունենա այն նշանները, ինչ

վոր համանուն մաժոր գամման, այսինքն՝ լյա-մինոր խրոմատիկն իջնելու ժամանակ կունենա լյա-մաժորի նշանները: Հետո համապատասխան նոտաները խրոմատիկ նշաններով իջեցնելով ու բարձրացնելով, համաձայն վերը հիշված որեւէ, կստանանք լյա-մինոր խրոմատիկ գամման, հետեյալ ձևով.—

Լյա մինոր բարձրացող խրոմատիկ գամմա.



իջնող խրոմատիկ գամմա.

Գնենելով լյա-մինոր խրոմատիկ գամման, դժվար չէ նկատել, վոր դեպի վեր բարձրացնելով ժամանակ գրվում է այնպես, ինչպես նա զուգահեռ դո-մաժոր խրոմատիկ գամման, միայն թե նրա VI աստիճանից սկսած, վորը դառնում է լյա-մինոր խրոմատիկ գամմայի I աստիճանը:

Գամմաների ազգակցությունը

§ 40. Խրոմատիկ գամմաների որեւէներին հիմք է ծառայում գամմաների առաջին աստիճանի ազգակցությունը: Առաջին աստիճանի ազգակցությունն մեզ են մատուցում այն գամմաները, վորոնք տարբերվում են իրարից մի նշանով միայն. կան թեթեւեղներ, վորոնք առաջին աստիճանի ազգակցության են վերագրվում մաժոր համանուն մինոր գամման, իսկ մինորում՝ համանուն մաժոր գամման:

Առաջին աստիճանի ազգակցություն դո-մաժոր գամմայից լյա-մինոր

Ըն-մին.—Ֆա-մաժ.—դո-մաժ.—սոլ-մաժ.—մի-մին.

դո-մինոր

Առաջին աստիճանի ազգակցութ. լյա-մինոր դամմայից
Լյա-մաժոր

Ֆա-մաժ. — րե-մին. — լյա-մին. — մի-մին. — սոլ-մաժ.

դո-մաժոր

Գամմաների ազգակցության ավելի մանրամասն ուսումնասիրությունը հարմոնիային և պատկանում (մոդուլյացիաների բաժին):

Ենհարմո-
նիկ գառնա

§ 41. Բացի վերը հիշված գամմաներից, հնում գոյություն ունեւ եռհարմոնիկ կոչված գամման, վորը ներկայացնում եր քառորդ տոներից կազմված մի հաջորդականություն: Յեւրոպական յերաժշտությունն այդ քառորդ տոներով գամմաները չի ոգտագործում, յերաժշտական սխտեմն ավելի պարզեցրած լինելու նպատակով, և ներկայումս, ինչպես հայտնի չե, են-հարմոնիկ հասկացողությունն ուրիշ իմաստով և գործածվում (տես § 26):

VI. Մ Ե Լ Ո Ղ Ի Ա

Մոսիվ

§ 42. Յերկու-յերեք կամ ավելի ձայների հաջորդականությունը, վոր միացված ե մի շեշտով, կոչվում ե մոսիվ: Սովորական մոտիվի յերկարությունն ե մեկ կամ յերկու տակտ:

Մելոդիա

Մոտիվներից կազմվում ե մելոդիան: Մելոդիա յե կոչվում բազմատեսակ բարձրություն և ութմի ձայների հաջորդականությունը:

Տոնայնա-
կանություն
(Тональ-
ность)

§ 43. Ամեն մի յերաժշտական յերկ ունի մի տիրապետող գամմա, վորը կոչվում ե տոնայնականություն: Տոնայնականությունը վորոշվում ե բանալիի մոտ զբրված նշաններով և մեկ ել տոնիկայով, այսինքն՝ հիմնական ձայնով, վորով և վերջանում ե յերաժշտական յերկը: Բայց վորովհետեւ միաժամանակ թե մաժոր և թե նրա զուգահեռ մինոր գամման ունեն հավասար

թվով նշաններ, ուրեմն բանալիի մոտ յեղած նշանների թիվը ճիշտ կերպով չի վորոշում տոնայնականությունը: Տոնայնականությունը ճիշտ վորոշելու համար պետք ե ծանոթանալ մելոդիային, յերբ անհրաժեշտ ե հիշել այն հանգամանքը, վոր մինոր գամման ունի յոթերորդ աստիճանը բարձրացնող պատահական նշան. այսպիսով, որինակ՝ յեթե բանալիի մոտ վոչ մի նշան չկա, դա նշանակում ե, վոր յերաժշտական յերկը զբրված ե կամ դո-մաժոր տոնով, կամ լյա-մինոր. իսկ յեթե մելոդիայում սոլ նոտայի առաջ զբրված ե դիեզ, դա նշանակում ե, վոր յերկը զբրված ե լյա-մինոր տոնով, վորովհետեւ լյա-մինոր գամման ունի յոթերորդ աստիճանը սոլ-ը բարձրացնող նշան—սոլ-դիեզ. իսկ յեթե այդ պատահական նշանը չկա մելոդիայում, ուրեմն յերկը զբրված ե դո-մաժոր տոնով:


Տրանսպո-
նիրակա

§ 44. Ամեն մի յերաժշտական յերկ կարելի չե փոխանցել մի ուրիշ տոնի մեջ. տվյալ յերկի բոլոր աստիճանները բարձրացնելով կամ ցածրացնելով հավասար տարածությամբ (որինակ a): Յերաժշտական յերկի այսպիսի փոխանցումը մեկ տոնայնականությունից մյուսը կոչվում ե տրանսպոնիրակա կամ տրանսպոնիրովկա: Տրանսպոնիրովկայի ժամանակ պատահական նշաններն ել են փոխանցվում, վորի ժամանակ յերեմն դիեզները փոխվում են դուբլդիեզի և բեկարի, իսկ բեմոլները՝ դուբլբեմոլի և բեկարի:

Լյա մինոր



ա) սի մինոր



բ) ֆա մինոր




Յերկի ճիշտ տրանսպոնիրովկան հնարավոր է միայն մաժորից մաժոր և մինորից մինոր անցնելիս: Տրանսպոնիրովկա կարելի չէ անել յեվ առանց նոսաների սեղը փոխելու, դրա սեղը բանալին փոխելով (որինակ Ծ):

VII. Մ Ե Լ Ի Զ Մ Ն Ե Ր


Մեկիզմներ են կոչվում բոլոր մեյոդիկ զարդարանքները, վորոնք արտահայտվում են մանր ձայնանիշների ձևով: Այդ մասը նշանների բնորոշ հատկությունն է, վոր նրանք սակի մեջ ինքնուրույն սեվողություն չունեն, այսինքն՝ նրանք կատարվում են իրենցից հետո յեկող մեյոդիալում յեղած նոտայի տեղում յեղան հաշվին: Մեկիզմներին են պատկանում հետևյալ տեսակի զարդարանքները—Ֆորելագ, գրուպպեսո, տեղ յեվ մորդեն:

Ֆորելագ

§ 45. Ֆորելագ կոչվում է այն մանր ոժանդակ նոսան, վորը նախորդում է մեյոդիայի մի վորեվ նոսային յեվ գրվում է նոսայի առաջ. ֆորելագները լինում են յերկու տեսակի՝ յերկար յեվ կարճ. յերկար Ֆորելագը գրվում է գլխավոր նոտայի տեղում յեղան կեսի չափ և խլում է մոսավորապես գլխավոր, իրենից հետո յեկող նոսայի սեվողության կեսը (որինակ ա և Ծ). կարճ Ֆորելագը գրվում է փոքրիկ ութերորդական նոտայով, վորը գծված է թեք գծով և կատարվում է կարճ և արագ (որինակ Ե և Դ):



Կարճ ֆորելագը կարող է կազմվել և մի քանի նոսաններից և յեթե այդպիսի ֆորելագը գտնվում է յերկի սկզբին, ապա նա կատարվում է յերեվ նախաձայն, իսկ յեթե այդպիսի միջանի նոտաներից կազմված ֆորելագը գտնվում է մի վորեկ նոտայից հետո մեյոդիալում, այն ժամանակ նա կատարվում է նախորդ նոտայի տեղում յեղան հաշվին:



Գրուպպեսո

58


§ 46. Գրուպպեսոն կազմված է չորս նոսայից և նշանակվում է պայմանական նշանով, վորը գրվում է կամ նոսայի գլխին կամ նոսաների միջև: Յեթե գրուպպեսոն գրված է նոսայի գլխին, այն ժամանակ նա բռնում է գլխավոր նոսայի ամբողջ սեվողությունը. այսինքն՝ այն նոտայի, վորի գլխին վոր գրված է (որինակ ա): Յեթե գրուպպեսոն գրված է նոսաների մեջ, այն ժամանակ նա խլում է նախորդ նոսայի սեվողության կեսը (որինակ Ծ): Յեթե գրուպպեսոն գրված է կատարել վերևի ոժանդակ գծից սկսած (որինակ Ծ), իսկ յեթե գրուպպեսոն գրված է հետո յեկող նոտան ափսոս ընդհատելով, քան գլխավոր նոտան, այն ժամանակ գրուպպեսոն պետք է կատարել ներքևի ոժանդակ գծից սկսած (որինակ Ե): Հետո, այն դեպքում, յերբ գրուպպեսոն գրված է միանման բարձրություն ունեցող նոսաների մեջ, այն ժամանակ նա բաղկացած կլինի յերեք նոսայից (որինակ Դ): Գրուպպեսոն վերևի և ներքևի նոտաները կարող են յորոժանդակորեն ձևափոխվել (որինակ Դ):



Տրեյ

§ 47. Տրեյ կոչվում է այն, չեբբ արագ, հավա-
սարաչափ և հաջորդաբար կրկնվում է գլխավոր նո-
տան վերին ոժանդակ նոտայի հետ, և գրվում է պայ-
մանական նշանով, վորը գրվում է նոտայի գլխին: Իբ-
րնույթով արելը նման է ձայնի դողդողանքին: Տրեյի
սեվողությունը հավասար է այն ձայնի սեվողությանը, վորը
վրա վոր գրված է: Տրեյի կատարման վերջում, փոխա-
նակ վերին ոժանդակ նոտայի, վերցնում ենք մի
անգամ ներքևի ոժանդակ նոտան, այսինքն՝ արելի
վերջում գրուպետտո չենք անում (որինակ ա). իսկ
յեթե ուզում են արելը վերջացնել մի ուրիշ ֆիգու-
րայով, այն ժամանակ գրում են այդ ֆիգուրան մանր
նոտաներով (որինակ 6):

ա) գրվում է կատարվում է.



Մորդեն

§ 48. Մորդենը կամ մորդանը ներկայացնում է
լրենից կարճ տրեյ, նույնպես նշանակվում է պայմա-
նական նշանով, վոր գրվում է նոտայի գլխին: Մոր-
դենը լինում է պարզ (որինակ ա) և կրկնակի (որի-
նակ 6). թե պարզ և թե կրկնակի մորդենները լի-
նում են գծված (որինակ 6) և վոչ գծված (որինակ 7)
և կատարվում են հետևյալ ձևով.



VIII. ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ

Ինտերվալ-
ներ

§ 49. Յերկու տոնի (միաժամանակ կամ հա-
ջորդաբար վերցրած) միջև յեղած տարածությունը կոչ-
վում է ինտերվալ. առաջին դեպքում ինտերվալը կոչ-
վում է հարմոնիկ, իսկ յերկրորդ դեպքում՝ մելոդիկ:
Տրված վորև նոտայից կարելի յե կազմել ինտերվալ
թե դեպի վեր և թե դեպի վար. դեպի վեր կազմվա-
ծը կոչվում է վերին ինտերվալ, դեպի վարը՝ ներքին
ինտերվալ. ինտերվալի ներքևի տոնը կոչվում է հիմք,
իսկ վերինը՝ գագաթ:

Ինտերվալի
բանական-
կան մեծու-
թյունը

§ 50. Ինտերվալի մեծությունը կախված է հիմ-
քի և գագաթի մեջ յեղած տարածության ավելի կամ
պակաս լինելուց և վորոշվում է ասիմաններին բանա-
կով (քանակական մեծություն), վորի ժամանակ աս-
տիճանների քանակը, հաջորդական կարգով, լատինա-
կան թվական անուններին համապատասխան կոչվում
են պրիմա, սեկունդա, տերցիա, կվարտա, կվինտա, սեքս-
տա, սեպտիմա, ոկտավա և այլն: Պրիմա կոչվում է, յերբ
միևնույն բարձրության վրա տոնը կրկնվում է. սե-
կունդա՝ յերկու հարևան նոտաների միջև տարածու-
թյունը, տերցիա՝ ներքևի նոտայի և նրանից հաջված
յերկրորդ նոտայի միջև տարածությունը, հետո գալիս են
կվարտա, կվինտա, սեքստա, սեպտիմա, ոկտավա և այլն:

Ինտերվալի
վարակա-
նան մեծու-
թյունը

§ 51. Բայց ինտերվալի քանակական մեծու-
թյունը դեռ չի կարող արտահայտել նրա ճիշտ մեծու-
թյունը. աչպես, որինակ՝ թեև գամմայի հարևան աստի-
ճանները միշտ գտնվում են սեկունդա հարաբերու-
թյան մեջ, բայց չեթե մենք համեմատենք դո—րե սե-
կունդան մի—ֆա սեկունդայի հետ, կտեսնենք, վորնը-
բանցից առաջինը (դո—րե) պարունակում է իր մեջ
ամբողջ տոն, իսկ յերկրորդ սեկունդան (մի—ֆա)՝ կես
տոն: Աչպիսով թեև այդ յերկու ինտերվալների քա-
նակական մեծությունը միևնույնն է, բայց վորակա-
կան մեծությունը տարբեր է: Աչպիսով տարբերու-
թյուն կարող է լինել և մյուս համանուն ինտերվալ-
ների մեջ. որինակ՝ դո—մի տերցիան պարունակում է
յերկու տոն և ըն—ֆա, նույնպես. տերցիա, բայց պա-

բունակում ե մեկ ու կես տոն: Այստեղից պարզ է, վոր ինտերվալի նիւս մեծութիւնը վորոշելու համար անհրաժեշտ է, բացի քանակական մեծութիւնից, նեղ յեղ վորակական մեծութիւնը: Իրենց վորակական մեծութիւնը ինտերվալները բաժանվում են հինգ տեսակի՝ մաքուր, մեծ, փոքր, մեծացրած (чрезмерные) և փոքրացրած (բացառիկ դեպքերում կրկնակի մեծացրած և կրկնակի փոքրացրած):

Յեթե վերջնենք մաքուր գամմա յեղ նրա տնիկայից կազմենք հաջորդաբար վեր յեղ վար բոլոր իններկայները, կտեսնենք, վոր սեկունդան, տերցիան, սեքստան և սեպտիման՝ կազմված դեպի վերեւ՝ տարբեր են, իրենց վորակական մեծութիւնը, դեպի վար կազմված համանուն ինտերվալներից: Նրանցից առաջինները պարունակում են մեկ ու կես տոն ավելի յերկրորդներից: Այսպիսով սեկունդա, տերցիա, սեքստա և սեպտիմա ինտերվալները, վոր կազմված են մաքուր դամմայի տոնիկայից, բաժանվում են յերկու տեսակի՝ մեծ և փոքր: Մաքուր դամմայի տոնիկայից դեպի վեր կազմվածները կոչվում են մեծ, իսկ դեպի ցած կազմվածները կոչվում են փոքր: Մնացած ինտերվալները, այսինքն՝ պրիմա, կվարտա, կվինտա և ոկտավա մաքուր դամմայի տոնիկայից կազմված դեպի վեր ու վար, միանգամայն նման են թե իրենց քանակական և թե վորակական մեծութիւնը, դրա համար ել կարելի չէ բաժանելու յերկու տեսակի, այլ կոչվում են ուղղակի մաքուր ինտերվալներ:

Տվյալ ինտերվալներ



Այն ինտերվալները, վորոնք դուրս են գալիս ուղղակի սահմաններից, կրում են առանձին անուններ. —



Մաքուր, մեծ և փոքր ինտերվալների մեծութիւնը տոններով և կիսատոններով արտահայտված է հետևյալ աղյուսակով. —

Մաքուր պրիման պարունակում է 0 տոն		
Փոքր սեկունդան	»	» 1/2 »
Մեծ »	»	» 1 »
Փոքր տերցիան	»	» 1 1/2 »
Մեծ »	»	» 2 »
Մաքուր կվարտան	»	» 2 1/2 »
» կվինտան	»	» 3 1/2 »
Փոքր սեքստան	»	» 4 »
Մեծ »	»	» 4 1/2 »
Փոքր սեպտիմա	»	» 5 »
Մեծ »	»	» 5 1/2 »
Մաքուր ոկտավան	»	» 6 »
Փոքր նոնան	»	» 6 1/2 »
Մեծ »	»	» 7 »
Փոքր դեցիման	»	» 7 1/2 »
Մեծ »	»	» 8 »

Ձեկափոխված ինտերվալներ

§ 52. Բացի մաքուր, մեծ ու փոքր ինտերվալներից գոյություն ունեն և ձեկափոխված ինտերվալներ, վորոնք բաժանվում են յերկու տեսակի՝ մեծացրած յեղ փոքրացրած: Այդ տեսակ ձեկափոխված ինտերվալներ հանդիպում են գլխավորապես հարմոնիկ (մաքուր յեղ միմեռ) գամմաներում, վորտեղ ունենք իջեցրած VI աստիճանը և արհեստական լուծվող նոտան (VII աստիճանը):

Բացառութիւն են կազմում մեծացրած կվարտան և փոքրացրած կվինտան: Այս յերկու ինտեր-

վաճերը բացի հարմոնիկ դամմաներից հանդիպում են և բնական մաժոր դամմայում: Մեծացրած կվարտա ստացվում է չորրորդ աստիճանից, և փոքրացրած կվինտա՝ ութերորդ աստիճանից:

Մեծացրած ինսերվալներ § 53. Մեծացրած ինսերվալներ*) ստացվում են մեծ ու փոքր ինսերվալներ կես սոն***) մեծացնելով, վոր կարելի չե անել յերկու ձևով՝ ինսերվալի գագաթը կես սոն բարձրացնել, կամ հիմքը կես սոն իջեցնել: Այսպես, որինակ՝ դո—բե մեծ սեկունդա, դո—բե-դիեզ կամ դո-բեմոլ—բե մեծացրած սեկունդաներ են: դո—Ֆա մաքուր կվարտա չե, դո—Ֆա-դիեզ կամ դո-բեմոլ—Ֆա մեծացրած կվարտաներ են:

Փոքրացրած ինսերվալներ § 54. Փոքրացրած ինսերվալներ***) ստացվում են փոքր յեվ մաժուր ինսերվալներ կես սոն փոքրացնելով, վորը կարելի չե անել նույնպես յերկու ձևով՝ ինսերվալի գագաթը կես սոն իջեցնել կամ հիմքը կես սոն բարձրացնել: Այսպես, որինակ՝ դո—սոլ մաքուր կվինտա չե, իսկ դո—սոլ-բեմոլ կամ դո-դիեզ—սոլ բեկար փոքրացրած կվինտաներ են, բե—դո փոքր սեպտիմա չե, իսկ բե—դո-բեմոլ կամ բե-դիեզ—դո փոքրացրած սեպտիմաներ են:

Ձեվափոխված ինսերվալների մեծությունը սոններով ու կիսասոններով արտահայտվում է հետևյալ աղյուսակով:

Մեծացրած սեկունդան	պարունակում է	$1\frac{1}{2}$ տոն
» կվարտան	»	3 »
» կվինտան	»	4 »
» սեքստան	»	5 »
Փոքրացրած տերցիան	»	1 »
» կվարտան	»	2 »
» կվինտան	»	3 »
» սեպտիման	»	$4\frac{1}{2}$ »

Բոլոր վերև հիշված ինտերվալները, բացառությամբ +6 և մինուս 3, պատահում են բնական և հարմոնիկ դամմաներում և կոչվում են տոնայնական ինտերվալներ (тональный интервал):

*) Մեծացրած ինտերվալները նշանակվում են + նշանով:

**) Չպետք է խառնել կես տոն և փոքր սեկունդա հասկացողությունները:

***) Փոքրացրած ինտերվալները նշանակում են — նշանով:

Բնական մաժոր § 55. Յեթե բնական մաժոր դամմայի բոլոր աստիճանները հաջորդաբար ընդունենք իբրև ինտերվալների հիմք, այն ժամանակ այդ աստիճաններից կըստացվեն մի շարք տարբեր ինտերվալներ, վոր պարզ կերպով արտահայտված է հետևյալ աղյուսակում:—

Մաժոր դամմա*)

	I	II	III	IV	V	VI	VII
Սեկունդան.	մ.	մ.	փ.	մ.	մ.	մ.	փ.
Տերցիաներ	մ.	փ.	փ.	մ.	մ.	փ.	փ.
Կվարտաներ	մք.	մք.	մք.	մծ.	մք.	մք.	մք.
Կվինտաներ	մք.	մք.	մք.	մք.	մք.	մք.	փք.
Սեքստաներ	մ.	մ.	փ.	մ.	մ.	փ.	փ.
Սեպտիման.	մ.	փ.	փ.	մ.	փ.	փ.	փ.

Յեթե իմանանք այս աղյուսակը, մենք կարող ենք վորոշել մեծ, փոքր և մաքուր ինտերվալների տեսակակարգությունը: Այսպես, որինակ՝ գիտենալով, վոր մեծ սեկունդա հանդիպում է բնական մաժոր դամմայի I, II, IV, V և VI աստիճանների վրա, կարելի չե վորոշել վորեք մեծ սեկունդայի տոնայնականությունը: Վերցնենք մեծ սեկունդա մի—Ֆա-դիեզ, վերը բերված աղյուսակի համաձայն մի—Ֆա-դիեզը ինչպես մեծ սեկունդա հանդիպում է մի-մաժոր դամմայի 1-ին աստիճանի վրա, բե-մաժոր դամմայի 2-րդ աստիճանի վրա, սի-մաժոր դամմայի 4-րդ աստիճանի վրա, լյա-մաժոր դամմայի 5-րդ աստիճանի վրա, սոլ-մաժոր դամմայի 6-րդ աստիճանի վրա:

*) Հռոմեական թվերը ցույց են տալիս դամմայի աստիճանները, վորոնցից է առնված են ինտերվալները:

Հարմոնիկ § 56. Յեթե հարմոնիկ մաժոր և մինոր գամմա-
մաժոր յեկ ների բոլոր աստիճանները հաջորդաբար ընդունենք
մինոր գամ- իբրև հիմք, այն ժամանակ այդ աստիճաններից կըս-
մայի աստի- տացվեն մի շարք տարբեր ինտերվալներ, վոր պարզ
ձաններից կերպով արտահայտված ե հետևյալ աղյուսակներում.—
ոսացվող ինտերվալ-
ներ

Մաժոր հարմոնիկ գամմա

	I	II	III	IV	V	VI	VII
Սեկունդ.	մ.	մ.	փ.	մ.	փ.	մծ.	փ.
Տերցիան.	մ.	փ.	փ.	փ.	մ.	մ.	փ.
Կվարտան.	մք.	մք.	փք.	մծ.	մք.	մծ.	մք.
Կվինտան.	մք.	փք.	մք.	մք.	մք.	մծ.	փք.
Սեքստան.	փ.	մ.	փ.	մ.	մ.	մ.	փ.
Սեպտիմ.	մ.	փ.	փ.	մ.	փ.	մ.	փ.

Մինոր հարմոնիկ գամմա

	I	II	III	IV	V	VI	VII
Սեկունդ.	մ.	փ.	մ.	մ.	փ.	մծ.	փ.
Տերցիան.	փ.	փ.	մ.	փ.	մ.	մ.	փ.
Կվարտան.	մք.	մք.	մք.	մծ.	մք.	մծ.	փք.
Կվինտան.	մք.	փք.	մծ.	մ.	մ.	մ.	փք.
Սեքստան.	փ.	մ.	մ.	մ.	փ.	մ.	փ.
Սեպտիմ.	մ.	փ.	մ.	փ.	փ.	մ.	փք.

Ինչպես վո-
րոշել ձեկա-
փոխված
ինտերվալ-
ների տոնա-
կանությունը

§ 57. Ձեկափոխված ինտերվալների տոնայնակա-
նությունը վորոշելիս պետք ե հիշել, վոր միջկվնույն ձե-
կափոխված ինտերվալն ունի չերկու տոնայնականու-
թյուն (հարմոնիկ մաժոր և մինոր):

Մեծացրած ինտերվալների մաժոր տոնայնականու-
թյունը վորոշվում ե ինտերվալի հիմքով, վորը հանդի-
սանում ե հարմոնիկ մաժոր գամմայի ստորին մեդի-
անտը (այսինքն՝ իջեցրած 6-րդ աստիճանը):


Մեծացրած ինտերվալների մինոր տոնայնականու-
թյունը վորոշվում ե ինտերվալի գազաթով, վորը հան-
դիսանում ե մինոր գամմայի լուծվող նոտան (7-րդ
աստիճանը): Այսպես, որինակ՝ պահանջվում ե վորո-
շել դո—սոլ-դիեզ մեծացրած կվինտայի տոնայնակա-
նությունը: Ինտերվալի հիմքը, դո նոտան, մի-մաժոր
հարմոնիկ գամմայի իջեցրած 6-րդ աստիճանն ե, հե-
տևաբար տվյալ ինտերվալը գտնվում ե հարմոնիկ մի-
մաժոր գամմայի տոնայնականության մեջ: Հետո, ինտերվա-
լի գազաթը՝ սոլ-դիեզը լյա-մինոր գամմայի 7-րդ աստի-
ճանն ե, հետևաբար տվյալ ինտերվալը գտնվում ե
լյա-մինորում: Այսպիսով, տվյալ ինտերվալը՝ դո—սոլ-
դիեզ՝ գտնվում ե յերկու տոնայնականության մեջ՝ մի-մա-
ժոր հարմոնիկ գամմայում յեկ լյա-մինոր գամմայում:
Փոքացրած ինտերվալների մաժոր տոնայնականու-
թյունը վորոշվում ե ինտերվալի գազաթով, վորը հան-
դիսանում ե հարմոնիկ մաժոր գամմայի ստորին մե-
դիանտը (այսինքն՝ իջեցրած 6-րդ աստիճանը):

Փոքացրած ինտերվալների մինոր տոնայնականու-
թյունը վորոշվում ե ինտերվալի հիմքով, վորը հան-
դիսանում ե մինոր գամմայի լուծվող նոտան (այ-
սինքն՝ 7-րդ աստիճանը): Այսպես, որինակ՝ պահանջ-
վում ե վորոշել դո-դիեզ—սի-բեմոլ փոքրացրած սեպ-
տիմայի տոնայնականությունը: Ինտերվալի հիմքը—
դո-դիեզ նոտան բե-մինոր գամմայի 7-րդ աստիճանն ե,
հետևաբար տվյալ ինտերվալը գտնվում ե բե-մինոր
գամմայի տոնայնականության մեջ: Հետո, ինտերվալի
գազաթը—սի-բեմոլ նոտան բե-մաժոր հարմոնիկ գամ-
մայի իջեցրած 6-րդ աստիճանն ե, հետևաբար տվյալ
ինտերվալը գտնվում ե և բե-մաժորում: Այսպիսով՝

ալյալ ինտերվալը՝ դո-դիեզ — սի-բեմոլ՝ գտնվում է յե-
կու սոնայնականության մեջ — *բե-միմորում* և հարմոնիկ
բե-մաժոր դամմայում: Ձեվափոխված ինտերվալների սո-
նայնականության մասին վերն ասվածները չեն վերա-
բերում յերկու ձևափոխված ինտերվալներին, այն է՝
մեծացրած սեփսային յեվ փոքացրած սեղիային: Այս
վերջինները, իբրև վոչ զամմաների աստիճանների վը-
րա կազմվածներ, չունեն տոնայնականություն և կոչ-
վում են խրոմատիկ կամ պատահական ինտերվալներ:

Ինտերվալ-
ների գարն-
վածքը

§ 58. Ինտերվալի հիմքի փոխադրությունը մի ոկ-
սակա վեր կամ գագաթի փոխադրությունը մի ոկտա-
վա ցած, այնպես վոր նրա ներքևի տոնը դառնա վե-
րևի, իսկ վերևինը՝ ներքևի, կոչվում է ինտերվալի
դարձվածք:



Դարձվածքի ժամանակ, լեթե սլյալ ինտերվալի
րվական անունը գումարենք նրա դարձվածքի թվական
անվան հետ, կստանանք ինքն թիվը, վոր պարզ կեր-
պով լերևում է ներքև բերված թվերից:

1	2	3	4	5	6	7	8
8	7	6	5	4	3	2	1

Բացի այդ՝ պետք է հիշել, վոր միայն մաֆուր
ինտերվալներն իրենց դարձվածքի ժամանակ սալիս են
մաֆուր ինտերվալներ:

Մնացած բոլոր ինտերվալները՝ մեծ, փոքր, մե-
ծացրած և փոքրացրած դարձվածքի ժամանակ ստա-
նում են հակառակ նշանակություն: Մեծ ինտերվալները
դարձվածքի ժամանակ սալիս են փոքր, փոքրերը սալիս
են մեծ, մեծացրածները՝ փոքրացրած, փոքրացրածները՝
մեծացրած:

Կոնսոնանս-
ներ յեվ դիս-
սոնանսներ

§ 59. Բոլոր ինտերվալները լսողության վրա ա-
ռաջացրած տպավորության տեսակետից բաժանվում
են յերկու հիմնական խմբի՝ կոնսոնանսներ և դիսսո-
նանսներ: Այն ինտերվալները, վորոնք բարեհնչուն են
և կարիք չեն զգում լուծվելու, կոչվում են կոնսոնանս-
ներ, իսկ այն ինտերվալները, վորոնք անբարեհնչուն
են և պետք է լուծել, կոչվում են դիսսոնանսներ: Կոն-
սոնանսներ են՝ մաֆուր պրիմա, մեծ յեվ փոքր սեղիա-
ներ, մաֆուր կվինթա, մեծ յեվ փոքր սեփսաներ, մաֆուր
ոկտավա յեվ մեծ ու փոքր դեցիմաներ (մաքուր կվար-
տան մեծ մասամբ հաշվվում է իբրև դիսսոնանս):

Մնացած բոլոր ինտերվալները կոչվում են դիս-
սոնանսներ: Կոնսոնանսներն իրենց հերթին բաժան-
վում են յերկու խմբի՝ լրիվ յեվ քերի: Դիսսոնանսներն
ևլ բաժանվում են յերկու տեսակի՝ դիատոնիկ և ձե-
վափոխված: Ձևափոխված ինտերվալներն ել բաժան-
վում են յերկու խմբի՝ տոնայնական և պատահական
(խրոմատիկ): Ինտերվալների ստորաբաժանումը պարզ
կերպով լերևում է հետևյալ սխեմայում:

Ինտերվալներ

Կոնսոնանսներ		Դիսսոնանսներ			
Լրիվ կոնս.		Ձևափոխվածներ			
Մեծացրածներ		Փոքրացրածներ			
Մեծ. 1 մե. 5	Փ. և մ. 3, փ. և մ. 2.	Պատահա- կան		Տոնայնա- կան	Պատա- հական
մե. 8.	փ. և մ. 6, փ. և մ. 7, փ. և մ. 10, փ. և մ. 9, Տոնայ- մե. 4	նական	կան	կան	հական
		+2, +4, +5.	+1, +3, +6.	-4, -5, -7.	-3, -6.

Դիսսոնանսներ ըստ մտքի*)

*) Տես § 66:

Դիստոնան § 60. Դիստոնանս ինսերվայի փոխանցումը կոնսո-
նների լու- նանսի կոչվում է դիստոնանսի լուծումն և կատարվում
ծաւմբ է վորոշ որենքով:

Դիստոնիկ § 61. Փոքր սեկունդան ունի յերկու լուծում. 1) վե-
դիստոնանս րեի տոնը մնում է իր տեղում, իսկ ներքեի տոնը
նների լու- մեծ սեկունդա իջնում է. 2) վերեի տոնը բարձրանում
ծաւմբ է մաքուր կվարտա վեր, իսկ ներքեի տոնը, ինչպես
և առաջին լուծման ժամանակ, իջնում է մեծ սեկուն-
դա ցած: Այսպիսով փոքր սեկունդան լուծվում է փոքր
սեքցիայի յեվ փոքր սեֆսայի:

Փոքր սեկունդայի դարձվածքը՝ մեծ սեպտիման,
նույնպես ունի յերկու լուծում. 1) ներքեի տոնը մնում
է իր տեղում, իսկ վերեի տոնն իջնում է մեծ սեկուն-
դա ցած. 2) ներքեի տոնը բարձրանում է մաքուր
կվարտա վեր, իսկ վերեի տոնը, ինչպես և առաջին
լուծման ժամանակ, իջնում է մեծ սեկունդա ցած:
Այսպիսով մեծ սեպտիման լուծվում է մեծ սեֆսայի յեվ
մեծ սեքցիայի, այսինքն՝ փոքր սեկունդայի դարձված-
քը լուծվում է փոքր սեկունդայի լուծումների դարձ-
վածքին:

Մեծ սեկունդան ունի չորս լուծում. 1 և 2) ներ-
քեի տոնն իջնում է ցած մեծ կամ փոքր սեկուն-
դա, իսկ վերեի տոնը մնում է իր տեղում. 3 և 4) վե-
րեի տոնը բարձրանում է վեր մաքուր կվարտա,
իսկ ներքեի տոնը, ինչպես և առաջին յերկու լուծում-
ների ժամանակ, իջնում է մեծ կամ փոքր սեկունդա
ցած: Այսպիսով մեծ սեկունդան լուծվում է մեծ յեվ
փոքր սեքցիայի յեվ նույնպես մեծ ու փոքր սեկունդայի:


Մեծ սեկունդայի դարձվածքը՝ փոքր սեպտիման
նույնպես ունի չորս լուծում. 1-ին և 2-րդ) ներքեի
տոնը մնում է իր տեղում, իսկ վերեի տոնն իջնում է
մեծ կամ փոքր սեկունդա ցած. 3-րդ և 4-րդ) ներքե-
վի տոնը բարձրանում է մաքուր կվարտա վեր, իսկ
վերեի տոնը, ինչպես և առաջին յերկու լուծումների
ժամանակ, իջնում է մեծ կամ փոքր սեկունդա ցած-
Այսպիսով՝ փոքր սեպտիման լուծվում է մեծ յեվ փոքր
սեֆսայի յեվ նույնպես մեծ յեվ փոքր սեքցիայի, այսին-

քն՝ մեծ սեկունդայի դարձվածքը լուծվում է մեծ սեկուն-
դայի լուծումների դարձվածքին:

Մաֆուր կվարտան ունի յերկու լուծում. 1 և 2) ներ-
քեի տոնը մնում է իր տեղում, իսկ վերեի տոնն
իջնում է մեծ կամ փոքր սեկունդա ցած: Այսպիսով՝
մաֆուր կվարտան լուծվում է մեծ յեվ փոքր սեքցիայի:

Փոքր նոնան ունի յերկու լուծում. 1) ներքեի
տոնը մնում է իր տեղում, իսկ վերեի տոնն իջնում
է փոքր սեկունդա ցած. 2) ներքեի տոնը բարձրա-
նում է մաքուր կվարտա վեր, իսկ վերեի տոնը, ինչ-
պես և առաջին լուծման ժամանակ, իջնում է փոքր
սեկունդա ցած: Այսպիսով՝ փոքր նոնան լուծվում է
մաֆուր ոկտավայի յեվ մաֆուր կվինտայի:

Մեծ նոնան ունի յերկու լուծում, 1) ներքեի տո-
նը մնում է իր տեղում, իսկ վերեի տոնն իջնում է
մեծ սեկունդա ցած. 2) ներքեի տոնը բարձրանում է
մաքուր կվարտա վեր, իսկ վերեի տոնը, ինչպես և ա-
ռաջին լուծման ժամանակ, իջնում է մեծ սեկունդա
ցած: Այսպիսով՝ մեծ նոնան լուծվում է մաֆուր ոկտա-
վայի յեվ մաֆուր կվինտայի:



Ձեվափոփ-
ված ինճեր-
վալներ
լուծումը

§ 62. Ձևափոխված ինտերվալները, բացառու-
թյամբ պատահական (խրոմատիկ) ինտերվալների,
ինչպես ասված է վերևում (§ 56), հանդիպում են
հարմոնիկ մաժոր և մինոր զամմաների աստիճաննե-
րի վրա, այսինքն՝ յերկու տոնայնություն մեջ, դրա-
համար ել ունեն յերկու լուծումից մոշ պակաս:

Մեծացրած
ինճերվալ-
ների լու-
ծումը


§ 63. Մեծացրած ինճերվալներում, ինչպես հայտնի
է, մինոր զամմայի լուծվող տոնը (7-րդ աստիճանը) գրե-
նվում է վերելում, իսկ հարմոնիկ մաժոր զամմայի ի-
ջեցրած 6-րդ աստիճանը գտնվում է ներքելում: Յեթե
ինկառի առնենք այն, վոր լուծվող տոնը, հարմոնիկ
ձայնատարություն (голосоведение) որենքների համա-
ձայն, ձգտում է վեր, իսկ հարմոնիկ մաժոր զամմայի
իջեցրած 6-րդ աստիճանը ձգտում է դեպի ցած, այն ժա-
մանակ պարզ կլինի, վոր մեծացրած ինճերվալներն ի-
րենց լուծման ժամանակ բնականում են:

Մինորում, մեծացրած ինտերվալների լուծման
ժամանակ դիսսոնանցնող տոնը (մինոր զամմայի 7-րդ
աստիճանը), վոր գտնվում է վերևում, բարձրանում է
փոքր սեկունդա վեր, իսկ ներքևի տոնը մնում է իր
տեղում:

Հարմոնիկ մաժորում, մեծացրած ինտերվալների
լուծման ժամանակ դիսսոնանցնող տոնը (հարմոնիկ
մաժոր զամմայի իջեցրած 6-րդ աստիճանը), վոր գը-
նվում է ներքևում, իջնում է փոքր սեկունդա ցած,
իսկ վերևի տոնը մնում է իր տեղում:

Բացի վերը ցույց տված այս յերկու լուծումնե-
րից, մեծացրած ինտերվալներից միջանիսի համար
գոյություն ունի մի յերրորդ լուծում էս, վոր վերա-
բերում է թե մաժորին և թե մինորին, և այդ ժամա-
նակ ռաժվում են սխաժամանակ յերկու տոները: Վերևի
տոնը բարձրանում է փոքր սեկունդա վեր, իսկ ներ-
քևի տոնը իջնում է փոքր սեկունդա ցած (իսկ մե-
ծացրած կվարտայում իջնում է և մեծ սեկունդա
ցած):

Մեծացրած ինտերվալների սխեմատիկ լուծումը
կարելի է արտահայտել հետևյալ կերպով:



Բաց պետք է ասել, վոր վերը հիշված այս յե-
րեք միջոցները գործադրելի են մոշ ամեն ժամանակ.
այդ դեպքում պետք է գործադրել յերեք միջոցներից
միայն այն, վորը վոր տանում է դեպի կոնսոնանս:



Փոքրաց-
րած ինճեր-
վալների
լուծումը

§ 64. Փոքրացրած ինճերվալներ մեծացրած ինճեր-
վալների դարձվածք են, այսինքն՝ մինոր զամմայի լուծ-
վող տոնը (7-րդ աստիճանը) գտնվում է ներքելում, իսկ
հարմոնիկ մաժոր զամմայի իջեցրած 6-րդ աստիճանը
գտնվում է վերելում: Այստեղից պարզ է, վոր փոքրաց-
րած ինճերվալները, հակառակ մեծացրած ինտերվալ-
ներին, լուծման ժամանակ նեղանում են:

Մինորում, փոքրացրած ինտերվալների լուծման
ժամանակ, դիսսոնանցնող տոնը (մինոր զամմայի 7-րդ
աստիճանը), վոր գտնվում է ներքևում, բարձրանում
է փոքր սեկունդա վեր, իսկ վերևի տոնը մնում է իր
տեղում:

Հարմոնիկ մաժորում փոքրացրած ինտերվալնե-
րի ժամանակ դիսսոնանցնող տոնը (հարմոնիկ մաժոր
զամմայի իջեցրած 6-րդ աստիճանը), վոր գտնվում է
վերևում, իջնում է փոքր սեկունդա ցած, իսկ ներ-
քևի տոնը մնում է իր տեղում:

Բացի վերը ցույց տված այս յերկու լուծումնե-
րից, փոքրացրած ինտերվալներից միջանիսի համար,

այնպես, ինչպես մեծացրած ինտերվալների համար
եր, գոյություն ունի մի յերրորդ լուծում ևս, վոր վե-
րաբերում է թե մաժորին և թե մինորին, և այդ դեպ-
քում յերկու տոները միաժամանակ են շարժվում,
ներքևի տոնը բարձրանում է փոքր սեկունդա վեր,
իսկ վերևի տոնն իջնում է փոքր սեկունդա ցած
(փոքրացրած կվինտայում իջնում է և մեծ սեկունդա
ցած):



Բայց պետք է ասել, ինչպես և մեծացրած ին-
տերվալների լուծման ժամանակ, վոր վերը հիշված
այս յերեք միջոցները գործադրելի չեն վոչ ամեն ժա-
մանակ, և այդ դեպքում պետք է գործադրել յերեք
միջոցներից միայն այն, վորը վոր տանում է դեպի
կոնսոնանս:



Ինտերվալ-
ների հե-
տևանքի
հավասա-
րությունը

65. Այն ինտերվալները, վոր հնչում են միասե-
սակ, բայց տարբեր են իրենց գրության ձևով յեվ անու-
նով, կոչվում են հեռաբանիկ հավասար ինտերվալներ.
այսպես, որինակ՝ դո—բե-դիեզ մեծացրած սեկունդա և
դո—մի-բեմոլ փոքր տերցիա են հաբմոնիկ հավասար
ինտերվալներ են:

Դիսսոնանս § 66. Այն ձևափոխված ինտերվալները, վորոնք
ենք ըստ մեթո- լսողություն հավասար են (ենհարմոնիկ հավասար)
կոնսոնանս ինտերվալներին, կոչվում են դիսսոնանս-
ներ ըստ մեթո- կամ ըստ գրության ձևի և չնայած ի-
րենց բարենհնչուն լինելուն, պետք է լուծվեն կոնսո-
նանս ինտերվալի: Այդպիսով ձևափոխված ինտերվալ-
ների շարքին են պատկանում հետևյալները:

+2	—4
+5	—7
	—6

IX. ՅԵՌԱՆՉՅՈՒՆՆԵՐ

Յերեք կամ ավելի տարբեր բարձրության տո-
ների ներդաշնակությունը կոչվում է ակկորդ:
§ 67. Այն ակկորդը, վոր կազմված է պրիմայից,
յուրեքից, կվինտայից կոչվում է յեռահնչյուն:
Յեռահնչյունի չորս հիմնական ձև գոյություն ունի.

Մաժոր յեռահնչյուն		վոր կազմված է մ, 3+մ. 3
Մինոր »		մ, 3+մ. 3
Մեծացրած »		մ, 3+մ. 3
Փոքրացրած »		մ, 3+մ. 3

Սեփասակ-
կորդ

§ 68. Վերոհիշյալ յեռահնչյուններից ամեն մեկն
ուսնի յերկու դարձվածք: Առաջին դարձվածքը, վոր
կազմվում է յեռահնչյունի հիմքը մի ոկտավա վեր
տեղափոխելով, կոչվում է սեքստակկորդ և նշանակ-
վում է 6 թվով. սեքստակկորդներն ունեն հետևյալ
ֆորմուլաները.

Մաժոր յեռանչյունի սեքստակորդ

Մինոր » »

Մեծացրած » »

Փոքրացրած » »

Կվարտետս § 69. Յեռանչյունի յերկրորդ դարձվածքը, վոր ալկորդ կազմվում է յեռանչյունի հիմքը և տերցիան մի ոկտավա վեր տեղափոխելով, կոչվում է կվարտետստակ-կորդ և նշանակվում է $\frac{4}{6}$ կամ $\frac{6}{4}$ ։ կվարտետստակ-կորդներն ունեն հետևյալ ֆորմուլաները.

Մաժոր յեռանչյունի կվարտետստ.

Մինոր » »

Մեծացրած » »

Փոքրացրած » »



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերես

Գլուխ 1. Ձայն. Յերաժշտական ձայնի հատկությունները: Յերաժշտական ձայնի անունները: Ոկտավաների բաժանումն աստիճանների: Ոկտավաների անունները 3

Գլուխ 11. Ձայնագրություն. Ձայնանիշներ (նոտաներ): Նոտայի տևողության հասկացողություն: Նոտաների բաժանումը: Նոտաների տևողության փոքրացումը: Նոտաների տևողության մեծացումը: Կետ: Ֆերմատո: Պաուզա: Նոտային սխառն կամ հընդադրի: Բանալիներ 5

Գլուխ 111. Ձափ. Տակտ: Ակցենտ (շեշտ): Ռիթմ: Ձափ: Խմբավորումն (գրուպլիրովկա): Միակուպ: Նախատակտ: Տեմպ: Ձայնի ուժը. 14

Գլուխ IV. Ամբողջ տոներ յեվ կիսատոներ: Կիսատոն ամբողջ տոն: Դիեզ և բեմոլ: Բեկար: Դուբլիեզ և դուբլբեմոլ: Ենհարմոնիզմ: Խրոմատիկ և դիատոնիկ կիսատոներ 18

Գլուխ V. Գամմաներ. Գամմաներ: Տետրախորդ: Դիատոնիկ գամմա: Գամմաների աստիճանների անունները: Մաժոր գամմա: Հարմոնիկ մաժոր գամմա: Բնական մինոր գամմա: Հարմոնիկ մինոր գամմա: Մելոդիկ մինոր գամմա: Խրոմատիկ գամմա: Գամմաների ազգակցությունը: Ենհարմոնիկ գամմա. 21

Գլուխ VI. Մելոդիա. Մելոդիա: Տոնայնականություն (տոնальность): Տրանսպոնիրովկա (փոխանցում). 32

Գլուխ VII. Մելիզմներ. Ֆորշլապ: Դրուպետոտ: Տրեյ: Մորդենտ 34

Գլուխ VIII. Ինտերվալներ.	
նական մեծությունը: Ինտերվալի վերական	
մեծությունը: Ձևափոխված ինտերվալներ: Մե-	
ծացրած ինտերվալներ: Փոքրացրած ինտերվալ-	
ներ: Բնական մաթոր գամմայի աստիճաններից	
ստացվող ինտերվալներ: Հարմոնիկ մաթոր և մի-	
նոր գամմաների աստիճաններից ստացվող ին-	
տերվալներ: Ինչպես վորոշել ձևափոխված ին-	
տերվալների տոնաչնականությունը: Ինտերվալ-	
ների դարձվածքը: Կոնսոնանսներ և դիսսոնանս-	
ներ: Դիսսոնանսների լուծումը: Դիատոնիկ դիս-	
սոնանսների լուծումը: Ձևափոխված ինտերվալ-	
ների լուծումը: Մեծացրած ինտերվալների լու-	
ծումը: Փոքրացրած ինտերվալների լուծումը: Ին-	
տերվալների ենհարմոնիկ հավասարությունը:	
Դիսսոնանսներ ըստ մտքի	37
Գլուխ IX. Յեռահնչյուններ. Յեռահնչյուններ: Սեքստակ-	
կորդ: Կվարտսեքստակկորդ	51



Հայաստանի Ազգային գրադարան



NL0444728

